**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 հուլիսի 2016 թվականի N Մ-635-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի հուլիսի 1-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Աջակցություն ֆուտբոլի զարգացմանը» ծրագրի մասին» N Մ-262-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին և կից ծրագրի 6-րդ կետերում «205,733,130 դրամ» բառերը փոխարինել «207,619,630 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագրի 9-րդ կետի 2-րդ ենթակետում «130,648,230 դրամ» բառերը փոխարինել «132,534,730 դրամ» բառերով.

3) որոշմանը կից ծրագրի 10-րդ կետի չորրորդ ենթակետում «7,150 ԱՄՆ-ի դոլարին համարժեք» բառերը փոխարինել «11,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք» բառերով:

2. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված կվարցային ավազը (8 տեղ, 200 տոննա ընդհանուր քաշով, 11,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

15/15-9/10343-16

15.07.16թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**15 հուլիսի 2016 թվականի N Մ- 636 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 8-ի N 07/80-2/17910-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 8-ի N 06/3-8/20558-16 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի հուլիսի 14-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված օդափոխության համակարգերը և մասերը (8 տեղ, 2,605 կգ ընդհանուր քաշով, 996,546.9 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, ԵՏՄ բեռ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1237-Ա և դեկտեմբերի 28-ի N Մ-1459-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

15/15-9/10311-16
15.07.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**15 հուլիսի 2016 թվականի N Մ- 637 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1
(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի հուլիսի 14-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված ջեռուցման համակարգի սարքավորումները և մասերը (40 տեղ, 857 կգ ընդհանուր քաշով, 9,693.22 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 718,150 դրամ, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1237-Ա և դեկտեմբերի 28-ի N Մ-1459-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

02508251

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**19 հուլիսի 2016 թվականի N Մ - 638 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՐԴԵՆԻՍ - ՄԱՐՏԱԿԵՐՏ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԱՄԱՐ ՄԱԶՈՒԹԻ ՆԵՐԿՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2016 թվականի հունիսի 15-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 135,200,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Վարդենիս - Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման համար մազութի ներկրում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«ԺԱՅՌ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08900236) 2016 թվականի հունիսի 7-ին կնքված N B-03/16 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կազմակերպել մազութի ձեռքբերումը և փոխադրումը՝ 300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 20-ի N Մ-371-Ա որոշումը:

ՆԱԽԱԳԱՀ      Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«13» հունիսի 2016թ.

«Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման համար մազութի ներկրում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը կապող ռազմավարական նշանակության ավտոճանապարհի կառուցման համար M-40 տիպի 800 տոննա մազութի ներկրում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ<br>(ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ճանապարհաշինության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 135.200.000,00 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն |
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016թ. հունիսի 07-ից մինչեւ 2016թ. նոյեմբերի 07-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2016թ հունիսի 07-ից մինչեւ 2016թ. նոյեմբերի 07-ը<br>800 տոննա մազութի ներկրում՝ 135.200.000,00 ՀՀ դրամ արժողությամբ (ճանապարհածախսը ներառյալ): |



| | | |
|---|---|---|
| | | Հանձնակատարի միջնորդավճար՝ 300.000,00 ՀՀ դրամ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը | «ԺԱՅՌ» ՍՊԸ-ի կողմից «AZAR SURUSH TEJARAT ARAS» LTD կազմակերպությունից գնված Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման համար «Հայաստան Համահայկական Հիմնադրամ»-ի հասցեով M-40 տիպի 800 տոննա մազութի ներկրման կազմակերպում /մեկ տոննայի արժեքը՝ 168.625,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի՝<br><br>ներմուծվող մազութի արժեքն է՝ 134.900.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի (ճանապարհածախսը ներառյալ)<br><br>հանձնակատարի վարձավճարը՝ 300.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**20 հուլիսի 2016 թվականի N Մ-639-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵ-ԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի N Մ-446-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒ-ԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2016 թվականի հուլիսի 18-ի N 1/06.2/11436-15 գրությունը և 2016 թվականի հուլիսի 18-ի համաձայնեցման թերթը, ո ր ո շ ո ւ մ է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 17.03.2016 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2016 թվականի ծրագրի մասին» N Մ-446-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «94,888,300» թիվը փոխարինել «95,388,300» թվով.

2) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից ձեռք բերված՝ 2013 թվականի արտադրության, «Mitsubishi L200» մակնիշի ամենագնաց ավտոմեքենան (նույնականացման համարը՝ MMBJNKB50ED002200 8,025,000 դրամ արժեքով, ներառյալ փոխադրման և այլ ծախսերը) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հուլիսի 2016 թվականի N Մ - 640 - Ա
քաղ. Երևան

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՐԴԵՆԻՍ - ՄԱՐՏԱԿԵՐՏ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԱՄԱՐ ՄԱԶՈՒԹԻ ՆԵՐԿՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ N 1

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2016 թվականի հուլիսի 14-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 39,393,750 դրամ ընդհանուր արժողությամբ «Վարդենիս - Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման համար մազութի ներկրում» **N 1** ծրագիրը (կցվում է):

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան
«14» հուլիսի 2016թ.

«Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման համար մազութի ներկրում»
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը կապող ռազմավարական նշանակության ավտոճանապարհի կառուցման համար անհրաժեշտ լրացուցիչ մազութի ներկրում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ճանապարհաշինության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 39.393.750,00 ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն |

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016թ հունիսի 23-ից մինչեւ 2016թ. նոյեմբերի 07-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2016թ հունիսի 23-ից մինչեւ 2016թ. նոյեմբերի 07-ը 250 տոննա մազութի ներկրում` 39.393.750,00 ՀՀ դրամ արժողությամբ (ճանապարհածախսը ներառյալ): |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը | «SEVAN» CENTRAL TRADING CO կազմակերպությունից իրանական նավթի Ազգային Ընկերության կողմից արտադրված` Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման համար 250 տոննա մազութի ձեռքբերում` 39.393.750,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի (մեկ տոննայի արժեքը` 157.575,00 ՀՀ դրամ): |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ տարեկան հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական`
Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**21 հուլիսի 2016 թվականի N Մ - 641 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N Մ-147-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Լալշ» եզդիների Ազգային միավորում» հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի հուլիսի 20-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Լալշ» եզդիների Ազգային միավորում» հասարակական կազմակերպության կողմից ձեռք բերված չմշակված քարե արտադրանքները և քար կտրող հաստոցի սկավառակները (170,320 կգ ընդհանուր քաշով, 18,326 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 12,550 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մարտի 16-ի «Լալշ» եզդիների Ազգային միավորում» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի եզդիների «Մալակե Տաուսի» տաճարի կառուցում և հարակից տարածքների կառուցապատում» ծրագրի մասին» N Մ-147-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**22 հուլիսի 2016 թվականի N Մ - 642 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՎԱՆԻ Պ. ՉԱՅԿՈՎՍԿՈՒ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԻ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 12-ի N 07/80-2/18134-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հուլիսի 12-ի N 02/14/8767-16, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2016 թվականի հուլիսի 12-ի N 01/7.1/3338-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 11-ի N 06/3-8/20690-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1,133,409 դրամ ընդհանուր արժողությամբ «Երևանի Պ. Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի շենքի էլեկտրամատակարարման ապահովում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էլեկտրաշինարար» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02204102) 2016 թվականի հունիսի 29-ին կնքված N ԾԷ-01/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրամատակարարման աշխատանքների իրականացում՝ 1,133,409 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Նախագահ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«04» [illegible] 2015թ

« Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Պ.Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի շենքի էլեկտրամատակարարման ապահովում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարելավել Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Պ.Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի սաների ուսումնառության պայմանները |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հանգանակություններից ստացված միջոցներից |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ<br>(ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ ք. Երևան, մշակույթի բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 1.133.409,00 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Երևան քաղաքի Պ.Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցը |

2

| | | |
|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016թ հունիսի 29-ից մինչեւ 2016թ. սեպտեմբերի 29-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2016թ հունիսի 29-ից մինչեւ 2016թ. սեպտեմբերի 29-ը<br>Երևան քաղաքի Պ.Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցի շենքի էլեկտրամատակարարման ապահովում 1.133.409,00 դրամ արժողությամբ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ԷԼԵԿՏՐԱՇԻՆԱՐԱՐ» ՓԲԸ-ի կողմից էլեկտրամատակարարման աշխատանքների իրականացում1.133.409,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 13. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Մշակույթի նախարարության հետ |
| 14. | Ծրագրի արդյունավետության գնահատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության գնահատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացնող գործադիր
տնօրենի [illegible]

[illegible]

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**22 հուլիսի 2016 թվականի N Մ - 643 - Ա**

**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿԻՐԱՆՑԻ, ԵՆՈՔԱՎԱՆԻ, ԼՈՒՍԱՁՈՐԻ, ՆԵՐՔԻՆ ԾԱՂԿԱՎԱՆԻ, ՍԱՐԻԳՅՈՒՂԻ ԵՎ ՍԵՎՔԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԵՌԱԳՆԱ ԱՐՈՏ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 13-ի N 07/80-2/18192-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հուլիսի 12-ի N 02/14/8766-16, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության 2016 թվականի հուլիսի 13-ի N 02/14.1/9028-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 11-ի N 06/3-8/20691-16 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2016 թվականի հուլիսի 14-ի N 01/21.1/2874-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 2,700,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կիրանցի, Ենոքավանի, Լուսաձորի, Ներքին Ծաղկավանի, Սարիգյուղի և Սևքարի գյուղական համայնքների հեռագնա արոտ տանող ճանապարհների վերանորոգման նախագծում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«ՀԳՇՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00005417) 2016 թվականի հունիսի 23-ին կնքված N ՀՀ/ՆՆ-03/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝ 2,700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական

հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան

«04» հուլիսի 2016թ.

# « Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կիրանց, Ենոքավան, Լուսաձոր, Ներքին Ծաղկավան, Սարիգյուղ և Սևքար գյուղական համայնքների հեռագնա արոտ տանող ճանապարհների վերանորոգման նախագծում »

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Վերականգնել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կիրանց, Ենոքավան, Լուսաձոր, Ներքին Ծաղկավան, Սարիգյուղ և Սևքար գյուղական համայնքների հեռագնա արոտ տանող ճանապարհները |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Տավուշի մարզ, Կիրանց, Ենոքավան, Լուսաձոր, Ներքին Ծաղկավան, Սարիգյուղ և Սևքար գյուղեր, ճանապարհաշինության բնագավառ |



| | | |
|---|---|---|
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 2.700.000,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Տավուշի մարզի վերոնշյալ գյուղերի բնակիչները |
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016թ հունիսի 23-ից մինչև 2016թ օգոստոսի 23-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2016թ հունիսի 23-ից մինչև 2016թ օգոստոսի 23-ը նախագծել ճանապարհների վերանորոգումը 2.700.000,00 դրամ արժողությամբ |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը | «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի կողմից Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կիրանց, Ենոքավան, Լուսաձոր, Ներքին Ծաղկավան, Սարիգյուղ և Սևքար գյուղական համայնքների հեռագնա արոտ տանող ճանապարհների վերանորոգման աշխատանքների նախագծում՝ 2.700.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (ներկայացվում են ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝ Արմինա Դա[illegible]

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**22 հուլիսի 2016 թվականի N Մ - 644 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԱՎՐԱ ԳՅՈՒՂՈՒՄ ՀՆԴԿԱՑՈՐԵՆԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՇԵՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 13-ի N 07/80-2/18204-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հուլիսի 12-ի N 02/14/8768-16, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2016 թվականի հուլիսի 14-ի N ՍԿ/ԳՂ-2/5712-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 13-ի N 06/3-8/20685-16 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հուլիսի 12-ի N 01/4154-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1,800,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բավրա գյուղում հնդկացորենի վերամշակման շենքի վերակառուցման նախագծում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«ՀԳՇՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00005417) 2016 թվականի հունիսի 23-ին կնքված N ՀՀ/ՆՆ-04/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում՝ 1,800,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

COMMISSION ... HUMANITARIAN PROGRAMS COORDINATING COMMISSION OF THE GOVERNMENT OF RA
02508251

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան

«04» հուլիսի 2016թ.

« Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բավրա գյուղում հինդկացորենի վերամշակման շենքի վերակառուցման նախագծում »

**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Վերականգնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բավրա գյուղի հնդկացորենի վերամշակման շենքը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Շիրակի մարզ, Բավրա գյուղ, գյուղատնտեսության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 1.800.000,00 դրամ: |



| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բավրա գյուղի համայնքը |
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2016թ հունիսի 23 -ից մինչեւ 2016թ. սեպտեմբերի 23-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2016թ հունիսի 23 -ից մինչեւ 2016թ. սեպտեմբերի 23-ը հնդկացորենի վերամշակման շենքի վերակառուցման նախագծում 1.800.000,00 ՀՀ դրամ արժողությամբ |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը | «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բավրա գյուղի հնդկացորենի վերամշակման շենքի վերակառուցման նախագծում՝1.800.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Շիրակի մարզպետարանի հետ |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (ֆինանսական եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**22 հուլիսի 2016 թվականի N Մ- 645 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 15-ի N 07/80-2/18505-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հուլիսի 15-ի N 02/14/8954-16, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի հուլիսի 15-ի N ՖՐ/ԱնՄ-1-2/6374-15 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 13-ի N 06/3-8/20974-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 88,546,500 դրամ ընդհանուր արժողությամբ «Ամառային ճամբարի կազմակերպում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Նորալուսին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08602616) 2016 թվականի հունիսի 30-ին կնքված N WVA/ADPs/SC-16/001/FY16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ամառային ճամբարի կազմակերպում՝ 69,300,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի հետ (ՀՎՀՀ՝ 06908506) 2016 թվականի հուլիսի 6-ին կնքված N WVA/ADPs/SC-16/002/FY16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ամառային ճամբարի կազմակերպում՝ 19,246,500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզպետարաններին:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Ծրագրի տնօրենի ԺՊ՝
Շաղիկ Մարուխյան

20 հունիսի 2016 թ.

«Ամառային ճամբարի կազմակերպում»
# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Հայաստանի Հանրապետության Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերի, Երևան քաղաքի 8-12 տարեկան 2,265 երեխաների ներգրավում նշված մարզերում իրականացվող երեխայի բարեկեցությանն (կրթություն, առողջապահություն, երեխաների պաշտպանություն, քրիստոնեական դաստիարակություն) ուղղված ծրագրերում, երեխաների ֆիզիկական զարգացում և ակտիվ հանգստի կազմակերպում ամառային ճամբարում: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | 1. «Վորլդ Վիժն» Մեծ Բրիտանիայի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ Opal Drive, Fox Milne, Milton Keynes, MK15 0ZR, UK<br>2. «Վորլդ Վիժն» ԱՄՆ-ի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ 34834 Weyerhaeuser Way So. Federal Way, WA 98001<br>3. «Վորլդ Վիժն» Շվեյցարիայի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ Kriesbachstrasse 30, CH-8600 Duebendorf, Switzerland<br>4. «Վորլդ Վիժն» Ֆրանսիայի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ 7 rue Pasquier, 75008 Paris, France<br>5. «Վորլդ Վիժն» Գերմանիայի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ Am Houiller Platz 4 61381 Friedrichsdorf<br>6. «Վորլդ Վիժն» Թայվանի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ 6F, 133, Sec. 4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan<br>7. «Վորլդ Վիժն» Կանադայի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ 2500-1 World Drive, Mississauga, ON L5T 0A7 Canada |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան փող. 1, ՀՎՀՀ՝ 02528755 |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | «Զեփյուռ» ճամբար (ՀՀ Կոտայքի մարզ, գ. Հանքավան)<br>«Ծիծեռնակ» ճամբար (ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր)<br>Բնագավառը՝ կրթական |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 88,546,500 (ութսունութ միլիոն հինգ հարյուր քառասունվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող են հանդիսանում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երեխաների Աջակցության ծրագրում գրանցված, ՀՀ Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Տավուշի, Սյունիքի մարզերի և Երևան քաղաքի շահառու 211 համայնքների (համայնքների ցանկը կցվում է) 2004-2008 թթ. ծնված, սոցիալապես անապահով ընտանիքների, ինչպես նաև ՀՀ Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Տավուշի և Սյունիքի մարզերում գործող «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» (ԻՏՁՄ) հասարակական կազմակերպության ինժեներական լաբորատորիաներ հաճախող ընդհանուր թվով 2,265 երեխաներ: Ստորև աղյուսակում ներկայացված է երեխաների թիվն ըստ մարզերի:<br><br>*Մարզ* — *Երեխաների թիվը*<br>Շիրակ — 300<br>Լոռի — 300<br>Արագածոտն — 150<br>Սյունիք — 480<br>Գեղարքունիք — 320<br>Տավուշ — 265<br>Երևան — 150<br>ԻՏՁՄ — 300<br>**Ընդամենը՝ — 2,265** |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 հուլիսի 2016 թ. – 29 օգոստոսի 2016 թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2016 թվականի հուլիսի 01-ից մինչև 2016 թվականի օգոստոսի 29-ն ընկած ժամանակահատվածում ամառային ճամբար կազմակերպել «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Տավուշի, Սյունիքի մարզերի և Երևան քաղաքի շահառու 211 համայնքների երեխաների, ինչպես նաև ՀՀ Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Տավուշի և Սյունիքի մարզերում գործող «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» (ԻՏՁՄ) հասարակական կազմակերպության ինժեներական լաբորատորիաներ հաճախող ընդհանուր թվով 2,265 երեխաների համար:<br><br>«Նորալուսին» ՍՊԸ-ն ՀՀ Կոտայքի մարզի Հանքավան գյուղում գտնվող «Զեփյուռ» ճամբարում ամառային հանգիստ է կազմակերպելու ընդհանուր թվով 1,970 մասնակցի համար (ճամբարային 6 հերթափոխ՝ 7 օր տևողությամբ)՝ համաձայն ստորև ներկայացված աղյուսակի. |

| № | Հերթափոխի սկիզբը | Հերթափոխի ավարտը | Մասնակիցների թիվը (ներառյալ ջոկատավարներն ու պատասխանատուները) | Անհրաժեշտ ֆինանսական միջոցներ (ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի) |
|---|---|---|---|---|
| 1. | 01 հուլիսի 2016թ. | 08 հուլիսի 2016թ. | 336 | 11,550,000 |
| 2. | 11 հուլիսի 2016թ. | 18 հուլիսի 2015թ. | 322 | 11,550,000 |
| 3. | 18 հուլիսի 2016թ. | 25 հուլիսի 2016թ. | 322 | 11,550,000 |
| 4. | 08 օգոստոսի 2016թ. | 15 օգոստոսի 2016թ. | 333 | 11,550,000 |
| 5. | 15 օգոստոսի 2016թ. | 22 օգոստոսի 2016թ. | 334 | 11,550,000 |
| 6. | 22 օգոստոսի 2016թ. | 29 օգոստոսի 2016թ. | 323 | 11,550,000 |
| | | Ընդամենը՝ | 1,970 | 69,300,000 |

«Նորալուսին» ՍՊԸ-ի մատուցած ծառայությունների արժեքը կազմում է 69,300,000 (վաթսունինը միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:

Հայ Առաքելական Եկեղեցու Գուգարաց թեմը ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում գտնվող «Ծիծեռնակ» ճամբարում ամառային հանգիստ է կազմակերպելու ընդհանուր թվով 611 մասնակցի համար (ճամբարային 3 հերթափոխ՝ 7 օր տևողությամբ)՝ համաձայն ստորև ներկայացված աղյուսակի.

| № | Հերթափոխի սկիզբը | Հերթափոխի ավարտը | Մասնակիցների թիվը (ներառյալ ջոկատավարներն ու պատասխանատուները) | Անհրաժեշտ ֆինանսական միջոցներ (ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի) |
|---|---|---|---|---|
| 1. | 11 հուլիսի 2016թ. | 18 հուլիսի 2016թ. | 215 | 6,772,500 |
| 2. | 18 հուլիսի 2016թ. | 25 հուլիսի 2016թ. | 234 | 7,371,000 |
| 3. | 15 օգոստոսի 2016թ. | 22 օգոստոսի 2016թ. | 162 | 5,103,000 |
| | | Ընդամենը՝ | 611 | 19,246,500 |

Հայ Առաքելական Եկեղեցու Գուգարաց թեմի մատուցած ծառայությունների արժեքը կազմում է 19,246,500 (տասնինը միլիոն երկու հարյուր քառասունվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 88,546,500 (ութսունութ միլիոն հինգ հարյուր քառասունվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:

| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ծրագիրն իրականացնելու համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը ընտրել է երկու կազմակերպություն և ամառային ճամբարի կազմակերպման պայմանագրեր է կնքելու «Նորալուսին» ՍՊԸ-ի և Հայ Առաքելական Եկեղեցու Գուգարաց թեմի հետ: «Նորալուսին» ՍՊԸ-ն ՀՀ Կոտայքի մարզի Հանքավան գյուղում գտնվող «Զեփյուռ» ճամբարում 6 հերթափոխով ամառային հանգիստ է կազմակերպելու ընդհանուր թվով 1,970 մասնակցի համար: Հայ Առաքելական |
|---|---|---|

Եկեղեցու Գուգարաց թեմը ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում գտնվող «Ծիծեռնակ» ճամբարում ամառային հանգիստ է կազմակերպելու ընդհանուր թվով 611 մասնակցի համար:
Կազմակերպիչներն ապահովելու են հետևյալ պայմանները յուրաքանչյուր հերթափոխում ընդրգկված մասնակիցների համար.

- ✓ ննջարանային մասնաշենք, լվացքատուն, սանհանգույցներ, ցնցուղ ընդունելու համար առանձնացված տարածք, խոհանոց՝ բոլոր անհրաժեշտ սարքավորումներով, ճաշարան՝ անհրաժեշտ քանակի սեղաններով և աթոռներով, խաղահրապարակ, մարզահրապարակ և երեխաների ակտիվ հանգիստը կազմակերպելու համար այլ անհրաժեշտ տարածքներ և տաղավարներ.
- ✓ համապատասխան քանակի ննջասենյակներ՝ մեկ ննջասենյակ առավելագույնը 10-12 հոգու համար հաշվարկով.
- ✓ չորսանգամյա բարձրորակ սնունդ (նախաճաշ, ճաշ, հետճաշիկ և ընթրիք)
- ✓ 24-ժամյա տաք և սառը ջրամատակարարում.
- ✓ բուժկետ՝ հագեցված համապատասխան դեղորայքով և բուժական պարագաներով.
- ✓ ճամբարի անվտանգությունը համապատասխան քանակի պահակային կետերի միջոցով.
- ✓ կազմակերպել յուրաքանչյուր հերթափոխի երեխաների համար զանազան սպորտային, մշակութային, հոգևոր միջոցառումների, արշավներ և ակտիվ հանգստի համար նախատեսված խաղեր և այլ միջոցառումներ:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 88,546,500 (ութսունութ միլիոն հինգ հարյուր քառասունվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի, որից 69,300,000 (վաթսունինը միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ արժեքով (առանց ԱԱՀ-ի) ծառայությունները մատուցելու է «Նորալուսին» ՍՊԸ-ն, իսկ 19,246,500 (տասնինը միլիոն երկու հարյուր քառասունվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով (առանց ԱԱՀ-ի) ծառայությունները մատուցելու է Հայ Առաքելական Եկեղեցու Գուգարաց թեմը:

| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի հետ կապված կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
|---|---|---|
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը ծրագիրն իրականացնելու է ՀՀ Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի, ինչպես նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետ համագործակցությամբ: |

| | | |
|---|---|---|
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվելու է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Ազգային գրասենյակի, Գյումրու, Ամասիայի, Թալինի, Ապարանի, Գավառի, Վարդենիսի, Ճամբարակի, Ստեփանավանի, Ալավերդու, Իջևանի, Նոյեմբերյանի, Սիսիանի, Կապանի և Երևանի Տարածքային Զարգացման Ծրագրերի, ինչպես նաև ֆինանսական օժանդակությունը տրամադրող «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության ԱՄՆ-ի, Կանադայի, Թայվանի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի աջակցող գրասենյակների կողմից:<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն իր հերթին վերահսկվում է միջազգային աուդիտորների և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Երեխայի Պաշտպանության ծրագրի տնօրեն

Աիդա Մուրադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ - 646 - Ա**

**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅՑՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 8-ի N 07/80-2/17946-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 12-ի N 06/3-8/20733-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից ձեռք բերված հաշմանդամների համար նախատեսված FORD TAURAS մակնիշի ավտոմեքենայի (1999 թվականի արտադրության, նույնականացման համարը՝ 1FAFP53U9XG239796, 1,055 կգ ընդհանուր քաշով, 1,500 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 1,650 ԱՄՆ-ի դոլար) ներմուծման ծրագիրը: Մաքսային ձևակերպումները կատարվելու են ԱՄ ՄԶՄ մաքսատանը:

Ավտոմեքենան նախատեսված է անհատույց հանձնել Արցախի ազատամարտի հաշմանդամ վետերաններից մեկին:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ - 647 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 8-ի N 07/80-2/17938-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հուլիսի 12-ի N ԱՄ/22.2/7612-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 11-ի N 06/3-8/20684-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Գերմանիայի հայ բժշկական ասոցիացիայի կողմից «CRONIMET» mining AG» կազմակերպության միջոցով Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված դեղորայքի, բժշկական սարքավորումների և պարագաների, հագուստի, վերմակների և այլ ապրանքների (10 պալետ, 1,805 կգ ընդհանուր քաշով, 13,238.39 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 1,680 եվրո, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ - 648 - Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ N 1

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 18-ի N 07/80-2/18635-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հուլիսի 14-ի N ԱՄ/22.2/7721-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 13-ի N 06/3-8/21088-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայաստան-Արցախ հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բժշկական սարքավորումների և պարագաների (376 տեղ, 6,544.60 կգ ընդհանուր քաշով, 583,192.21 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 7,466 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ - 649 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N Մ-857-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 13-ի N 07/80-2/18163-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 11-ի N 06/3-8/20686-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

02528755
ՎՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
WV ARMENIAN BRANCH

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 200 | Հատ | Շապիկ | | 516.34 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ամասիայի տարածաշրջան) Ար 9/10.9 |
| 40 | Հատ | Հովհարով գլխարկ | | 114.36 | |
| 60 | Հատ | Մանկական գլխարկ | | 194.64 | |
| 40 | Հատ | Մանկական գործած սվիտեր | | 143.84 | |
| 120 | Հատ | Գոտի | | 135.06 | |
| 50 | Հատ | Տղամարդու բլուզկա | | 220.58 | |
| 70 | Հատ | Կանացի բլուզկա | | 259.55 | |
| 10 | Հատ | Փափուկ խաղալիք | | 20.57 | |
| 50 | Հատ | Գրենական կոմպլեկտ | | 262.98 | |
| 20 | Հատ | Դպրոցական պայուսակ | | 28.83 | |
| 15 | Հատ | Մանկական գործած ծածկոց | | 37.07 | |
| 30 | Հատ | Տնտեսական պայուսակ | | 34.93 | |
| 7 | Հատ | Ծածկոց | | 18.44 | |
| 400 | Հատ | Պոլիէթիլենային տոպրակ | | 56.27 | |
| 250 | Հատ | Շապիկ | | 645.43 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ապարանի տարածաշրջան) |
| 50 | Հատ | Հովհարով գլխարկ | | 142.95 | |
| 80 | Հատ | Մանկական գլխարկ | | 259.51 | |
| 60 | Հատ | Մանկական գործած սվիտեր | | 215.77 | |
| 170 | Հատ | Գոտի | | 191.34 | |
| 80 | Հատ | Տղամարդու բլուզկա | | 352.93 | |
| 23 | Հատ | Տաբատ | | 91.20 | |
| 90 | Հատ | Կանացի բլուզկա | | 333.71 | |
| 10 | Հատ | Փափուկ խաղալիք | | 20.57 | |
| 70 | Հատ | Գրենական կոմպլեկտ | | 368.17 | |
| 40 | Հատ | Դպրոցական պայուսակ | | 57.66 | |
| 15 | Հատ | Մանկական գործած ծածկոց | | 37.07 | |
| 40 | Հատ | Տնտեսական պայուսակ | | 46.57 | |
| 7 | Հատ | Ծածկոց | | 18.44 | |
| 600 | Հատ | Պոլիէթիլենային տոպրակ | | 84.40 | |
| 200 | Հատ | Շապիկ | | 516.34 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Նոյեմբերյանի տարածաշրջան) |
| 40 | Հատ | Հովհարով գլխարկ | | 114.36 | |
| 50 | Հատ | Մանկական գլխարկ | | 162.20 | |
| 40 | Հատ | Մանկական գործած սվիտեր | | 143.84 | |
| 120 | Հատ | Գոտի | | 135.06 | |
| 50 | Հատ | Տղամարդու բլուզկա | | 220.58 | |
| 70 | Հատ | Կանացի բլուզկա | | 259.55 | |
| 10 | Հատ | Փափուկ խաղալիք | | 20.57 | |
| 50 | Հատ | Գրենական կոմպլեկտ | | 262.98 | |
| 20 | Հատ | Դպրոցական պայուսակ | | 28.83 | |
| 15 | Հատ | Մանկական գործած ծածկոց | | 37.07 | |
| 30 | Հատ | Տնտեսական պայուսակ | | 34.93 | |
| 7 | Հատ | Ծածկոց | | 18.44 | |
| 400 | Հատ | Պոլիէթիլենային տոպրակ | | 56.27 | |

02528755
ՎՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
WV ARMENIAN BRANCH

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 498 | Հատ | Շապիկ | | 1285.82 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Երևանի Քանաքեռ- Զեյթուն վարչական շրջան) 10.9 |
| 137 | Հատ | Հովհարով գլխարկ | | 391.69 | |
| 81 | Հատ | Մանկական գլխարկ | | 262.76 | |
| 60 | Հատ | Մանկական գործած սվիտեր | | 215.77 | |
| 170 | Հատ | Գոտի | | 191.34 | |
| 239 | Հատ | Տղամարդու բլուզկա | | 1054.37 | |
| 230 | Հատ | Կանացի բլուզկա | | 852.82 | |
| 10 | Հատ | Փափուկ խաղալիք | | 20.57 | |
| 141 | Հատ | Գրենական կոմպլեկտ | | 741.60 | |
| 88 | Հատ | Դպրոցական պայուսակ | | 126.86 | |
| 15 | Հատ | Մանկական գործած ծածկոց | | 37.07 | |
| 30 | Հատ | Տնտեսական պայուսակ | | 34.93 | |
| 7 | Հատ | Ծածկոց | | 18.44 | |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 6690.60 | 55405.00 | |

02528755
ՎՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
WV ARMENIAN
BRANCH

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**22 հուլիսի 2016 թվականի N Մ- 660 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1296-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ) N 1**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 20-ի N 07/80-2/18777-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 19-ի N 06/3-8/21501-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1296-Ա (2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-735-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՌԱՖ-ՖԼՈՐ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01548296) 2016 թվականի հուլիսի 11-ին կնքված N 025/SCI-ARM/ACHE/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երկու մարզադահլիճի հատակների վինիլային ծածկույթի իրականացում՝ 6,336,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ- 661 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 20-ի N 07/80-2/18810-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 19-ի N 06/3-8/21523-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մյասնիկյան 20, ՀՎՀՀ՝ 02565835) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան» ծրագրի մասին» N Մ-1173-Ա (2014 թվականի օգոստոսի 1-ի N Մ-768-Ա, 2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-827-Ա և 2016 թվականի մայիսի 20-ի N Մ-392-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«Հորիզոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01513552) 2016 թվականի հուլիսի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կենտրոնախույս պոմպի ձեռքբերում՝ 361,250 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ - 662 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի N Մ-593-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 21-ի N 07/80-2/18865-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 20-ի N 06/3-8/21659-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հուլիսի 1-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Ջերմատների կառուցում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի խոցելի ընտանիքների համար» ծրագրի մասին» N Մ-593-Ա որոշման 1-ին և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերում «5,200,000 դրամ» բառերը փոխարինել «4,894,560 դրամ» բառերով:

2. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԱՍՇԻՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02247264) 2016 թվականի հուլիսի 15-ին կնքված N WVA/IJEV ADP/CW-GH-16/001(RB)/FY16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջերմատների կառուցում, 4,894,560 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ-663-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 8-ի N 07/80-2/17909-16, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 8-ի N 06/3-8/20556-16 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հուլիսի 7-ի N ԱՄ/22.2/7477-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի հայկական բժշկական միության (UMAF) կողմից Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի բնակչության տեսողության զննման, ակնոցների պատրաստման և տրամադրման՝ «Ակնոցներ Հայաստանի համար» ծրագրի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված բժշկական սարքավորումների (5 տեղ, 108 կգ ընդհանուր քաշով, 10,400 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը) և օպտիկական ապակիների, շրջանակների, օպտիկական ակնոցների ու տուփերի (6 տեղ, 120 կգ ընդհանուր քաշով, 2,400 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո սարքավորումներն արտահանվելու են Ֆրանսիայի հայկական բժշկական միության (UMAF) բժիշկմասնագետների կողմից:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված ծրագրի ավարտից



հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին և Սիսիան քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**22 հուլիսի 2016 թվականի N Մ-664-Ա**
**քաղ. Երևան**

**«ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 1-ի N 07/80-2/17627-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 4-ի N 06/3-8/19945-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի կահավորման համար ձեռք բերված ջահերի, լուսատուների և լամպերի (224 տեղ, 2,821 կգ ընդհանուր քաշով, 150,860.33 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 3,680,500 դրամ, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ-665-Ա**
**քաղ. Երևան**

## «ՖՐԱՆՍ - ՀԱՅԿԱԿԱՆ ՍՐՏԱՆՈԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 7-ի N 07/80-2/17867-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 8-ի N 06/3-8/20557-16 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հուլիսի 7-ի N ԱՄ/22.2/7475-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի «Հայ-ֆրանսիական առողջապահական շարժում» բարեգործական կազմակերպության կողմից որպես օժանդակություն Գորիսի նորակառույց սրտաբանական կենտրոնի համար «Ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոն» պետական հատկացումների հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի հասցեով ուղարկված դեղորայքի (4 տեղ, 110 կգ ընդհանուր քաշով, 12,296.65 եվրո ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոն» պետական հատկացումների հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**22 հուլիսի 2016 թվականի N Մ-666-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 18-ի N 07/80-2/18621-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 14-ի N 06/3-8/21198-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից ձեռք բերված «Apple iMac» համակարգիչները և ծրագրային ապահովումը (5 հատ՝ 51,7 կգ ընդհանուր քաշով, 6,941.19 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 851.40 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա, 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա, հուլիսի 18-ի N Մ-680-Ա, դեկտեմբերի 20-ի N Մ-1204-Ա, 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-040-Ա, փետրվարի 25-ի N Մ-153-Ա, օգոստոսի 28-ի N Մ-911-Ա, հոկտեմբերի 2-ի N Մ-1051-Ա, դեկտեմբերի 4-ի N Մ-1299-Ա և 2016 թվականի մարտի 18-ի N Մ-211-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ-667-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 2

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հունիսի 28-ի N 07/80-2/17274-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հունիսի 22-ի N 06/3-8/18779-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա, 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա և հուլիսի 22-ի N Մ-671-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԿՆԱՌԲ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01240266) 2016 թվականի հունիսի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրական սարքավորումների ձեռքբերում՝ 2,801,700 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ-668-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 6-ի N 07/80-2/17750-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 4-ի N 06/3-8/19944-16 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա, 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա և հուլիսի 22-ի N Մ-671-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) ՌԴ «Սոյուզլիֆտմոնտաժ» ԲԲԸ-ի «Յուզլիֆտ» ԴՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00009839) 2016 թվականի հունիսի 15-ին կնքված՝ N 6 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերելակների տեղադրման աշխատանքների իրականացում՝ 5,334,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



2) «Ստեկո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07203481) 2016 թվականի հունիսի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հայելային դեկորացիաների պատրաստման աշխատանքների իրականացում՝ 2,326,900 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Նախագահ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ-669-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1220-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-թյան 2016 թվականի հուլիսի 15-ի N 07/80-2/18472-16 և Հայաստանի Հանրապետության կառա-վարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 12-ի N 06/3-8/20791-16 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-կարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեփանավանի նոր մանկապարտեզի մանաշենքի կառուցման» ծրագրի մասին» N Մ-1220-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի դեկտեմ-բերի 12-ի N Մ-1198-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վեկս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01525774) 2016 թվականի հունիսի 29-ին կնքված՝ N ՎՏՀ/05 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տրավերտինե երեսա-պատման սալիկների մատակարարում՝ 2,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-րարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-մուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ-670-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 6-ի N 07/80-2/17751-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 4-ի N 06/3-8/18440-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1444-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Գրանթ թորնթոն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00040569) 2016 թվականի հունիսի 7-ին կնքված՝ N AT-AU-047-16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի ֆինանսական տարվա աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 3,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՄՁՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01514872) 2016 թվականի հունիսի 13-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հատուկ լվացող սարքի խոզանակի ձեռքբերում՝ 91,667 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Գրիգոր Աթանեսյանի հետ (անձնագիր՝ 71 9839540) 2016 թվականի մայիսի 12-ին կնքված՝ N 01-12.05.16 պայմանագրում նշված



գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման անհատույց ծառայությունների մատուցում՝ գնահատված 700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Եվգենիա Մուխինայի հետ (անձնագիր՝ 71 1980112) 2016 թվականի մայիսի 12-ին կնքված՝ N 02-12.05.16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման անհատույց ծառայությունների մատուցում՝ գնահատված 700,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) ԱՄՆ-ի քաղաքացի Լիլիթ Աբաջյանի հետ (անձնագիր՝ 506319013) 2016 թվականի հունիսի 7-ին կնքված՝ N 01-07.06.16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 950,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ-671-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 18-ի N 07/80-2/18639-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 14-ի N 06/3-8/21201-16 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Տաշիր» բարեգործական հիմնադրամի 2016 թվականի հուլիսի 12-ի N 065 գրությունը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի և հանդիսությունների դահլիճի շենքերի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշման մեջ (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա և 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա որոշումների խմբագրությամբ) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «4,040,255,000 դրամ» բառերը փոխարինել «5,054,355,000 դրամ» բառերով.

2) որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Նախագահ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Տաշիր» բարեգործական հիմնադրամի
Հոգաբարձուների խորհրդի կողմից
(արձանագրություն թիվ 01/11)
31 հունվարի 2012թ.
լրամշակված է 12 հուլիսի 2016թ.
Հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար
Աշոտ Վարոսյան

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վեհարանի և հանդիսությունների դահլիճի շենքերի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում»

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ կառուցվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքը և անհրաժեշտություն է առաջացել իրականացնել Վեհարանի և հանդիսությունների դահլիճի շենքերի արտաքին և ներքին հարդարման աշխատանքները: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ 07203481, հեռ. (+374-10) 54-53-05. էլ. փոստ՝ a-varosyan@mail.ru) |
| 4. | Ծրագրի կատարողը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ 07203481, հեռ. (+374-10) 54-53-05. էլ. փոստ՝ a-varosyan@mail.ru) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, հոգևոր բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է - 5,054,355,000 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանություն: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2011 թվականի հոկտեմբերի 17-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը: |

7.1

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Արտաքին երեսպատման և քանդակագործական աշխատանքներ - 545,120,000 դրամ,<br>2. Պատուհանների և դռների պատրաստում ու տեղադրում - 448,535,000 դրամ,<br>3. Տանիքի կառուցման աշխատանքներ - 138,000,000 դրամ,<br>4. Պատերի կառուցում, հատակների և աստիճանավանդակների երեսպատում - 1,053,000,000 դրամ,<br>5. ներքին հարդարման աշխատանքներ - 1,200,000,000 դրամ,<br>6. տարածքի բարեկարգում - 247,000,000 դրամ,<br>7. հեղինակային հսկողություն - 55,700,000 դրամ,<br>8. ինժեներական կոմունիկացիաների կառուցում - 1,367,000,000 դրամ,<br>Նշված աշխատանքների իրականացման ժամկետը սահմանված է մինչև 30.12.2016թ. |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալվում է ծառայությունների մատուցման և աշխատանքների իրականացման, նյութերի, սարքավորումների և այլ ապրանքների ներմուծման ու Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռք բերման դիմաց հարկային արտոնություններ, մասնավորապես.<br>1. «Օրիենթ Սթոն» ՍՊԸ-ի կողմից տուֆ քարե դետալների մատակարարում «Դալմա-Շին» ՍՊԸ-ին – 52,662,000 դրամ<br>2. «Յուրիկ-Դավիթ» ՍՊԸ-ի կողմից - 2400 քառ. մետր ընդհանուր մակերեսով տուֆ քարե սալիկների մատակարարում «Դալմա-Շին» ՍՊԸ-ին - 16,800,000 դրամ<br>3. «Հ.Հովհաննիսյան և ընկերներ»ՍՊԸ-ի կողմից տուֆ քարե դետալների մատակարարում «Դալմա-Շին» ՍՊԸ-ին - 20,658,000 դրամ<br>4. Արտաքին երեսպատման և քանդակագործական աշխատանքներ - 3700 քառ. մետր - 455,000,000 դրամ, որից քարերի ներմուծում - 155,000,000 դրամ<br>5. Օդափոխության, ջեռուցման և հովացման համակարգերի սարքավորումների և այլ նյութերի ներմուծում - 380,000,000 դրամ,<br>6. Օդափոխության, ջեռուցման և հովացման համակարգերի համար նյութերի ձեռքբերում և կառուցման աշխատանքների իրականացում - 200,000,000 դրամ<br>7. Պատուհանների պատրաստում և տեղադրում - 1443 քառ. մետր (273 հատ) - 274,035,000 դրամ, որից պրոֆիլների և այլ նյութերի ներմուծում - 40,000,000 դրամ<br>8. Դռների պատրաստում և տեղադրում - 623 քառ. մետր (292 հատ) - 174,500,000 դրամ<br>9. Տանիքի ջրամեկուսացման համար նյութերի ներմուծում - 78,000,000 դրամ<br>10.Տանիքի ջրամեկուսացման համար նյութերի ձեռք բերում և կառուցման աշխատանքների իրականացում - 60,000,000 դրամ<br>11.Հատակների երեսպատման աշխատանքների իրականացում՝ բազալտից, մարմարից և գրանիտից - 7640 քառ. մետր - 900,000,000 դրամ, որից ներմուծում - 650,000,000 դրամ,<br>12.Պատերի և միջնորմների կառուցում - 940 խորանարդ մետր - 20,000,000 դրամ<br>13.Աստիճանների երեսպատման աշխատանքների իրականացում՝ բազալտից, |



| | | |
|---|---|---|
| | | մարմարից և գրանիտից - 293 քառ. մետր - 133,000,000 դրամ, որից ներմուծում - 78,000,000 դրամ<br>14. Սանհանգույցների կառուցում, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի իրականացում և նյութեր - 210,000,000 դրամ, որից ներմուծում - 80,000,000 դրամ<br>15. Էլեկտրական ցանցի մոնտաժում և այլ սարքավորումների ձեռք բերում - 280,000,000 դրամ, որից ներմուծում - 95,000,000 դրամ<br>16. Վերելակների և դրամց մոնտաժման համար անհրաժեշտ այլ սարքավորումների, նյութերի ձեռք բերում - 135,000,000 դրամ, որից ներմուծում - 90,000,000 դրամ<br>17. Անվտանգության և հակահրդեհային համակարգերի սարքավորումների ձեռք բերում և մոնտաժման աշխատանքների իրականացում - 162,000,000 դրամ, որից ներմուծում - 70,000,000 դրամ<br>18.Ներքին հարդարման աշխատանքների համար քարերի, ներկանյութերի, փայտյա երեսպատման սալերի, մանրահատակի, պաստառների և այլ նյութերի ձեռք բերում - 8520 քառ. մետր -1,200,000,000 դրամ, որից ներմուծում - 700,000,000 դրամ<br>19.Տարածքի բարեկարգում - 4270 քառ. մետր - 247,000,000 դրամ<br>20.Հեղինակային հսկողություն - 55,700,000 դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական բաժնի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև տեղեկատվություն կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ:<br>Նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների կողմից: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ-672-Ա**
**քաղ. Երևան**

### «ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՋՐԱԳԾԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 18-ի N 07/80-2/18638-16, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 15-ի N 06/3-8/21291-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հուլիսի 15-ի N 02/14/8958-16, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2016 թվականի հուլիսի 20-ի N 01/15.1/2744-16 ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2016 թվականի հուլիսի 19-ի N 01/15/2829-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) իրականացվող՝ 3,816,120 դրամ ընդհանուր արժեքով «Ջրագծի մասնակի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2016 թվականի հունիսի 16-ին կնքված՝ N 160616 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խմելու ջրի ջրագծի մասնակի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 3,816,120 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:



4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի
տնօրեն Բ. Զամբաչյանի կողմից

«7»-ը հուլիսի 2016թ.

# «Ջրագծի մասնակի վերանորոգում»
# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | **Ծրագրի նպատակը** | Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գետիկ համայնքում ջրագծի մասնակի վերանորոգման աշխատանքներ |
| 2. | **Ծրագրի բարեգործական որակման նպատակը** | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | **Բարեգործը** | Հոլանդիայի «Մեննենկիհղերեն» բարեգործական հիմնադրամ (հասցե՝ Նիդերլանդներ, քաղ. Հարդերվայք 3842 DR, Օուստայնդե 23) |
| 4. | **Ծրագիրը կատարողը** | Հայաստանի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս ՀՎՀՀ՝ 00068196) |
| 5. | **Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը** | Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ՝ սոցիալական բնագավառ |
| 6. | **Ծրագրի բյուջեն** | 3,816,120 դրամ |
| 7. | **Բարեգործություն ստացողը** | Գեղարքունիքի մարզ, Գետիկ համայնք<br>Գետիկի գյուղապետ՝ Այունց Սարգիս, անձնագիր՝ AM0420878, տրվ. 18.08.2021թ. 042 կողմից<br>հեռ.՝ 077-83-05-40 |
| 8. | **Ծրագրի իրականացման տևողությունը** | 2016 թվականի հունիսի 16-ից մինչև 2016 թվականի սեպտեմբերի 30-ը |
| 9. | **Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը** | 2016 թվականի հունիսի 16-ից մինչև 2016 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում Գետիկ համայնքի խմելու ջրի ջրագծի մասնակի վերանորոգման աշխատանքներ՝ 3,816,120 դրամ ընդհանուր արժողությամբ: |
| 10. | **Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը** | «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է Գետիկ համայնքի խմելու ջրի ջրագծի մասնակի վերանորոգման պայմանագիր, որի արժեքը կազմում է 3,816,120 դրամ: |
| 11. | **Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը** | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | **Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ** | Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի մարզպետարան |
| 13. | **Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը** | Հաշվետվությունների ներկայացում «Մեննենկիհղերեն» բարեգործական հիմնադրամին և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ սահմանված կարգով: |

Կազմեց՝ տնօրենի տեղակալ Վահե Ավագյանը
(անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ-673-Ա**
**քաղ. Երևան**

## «ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ.

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 20-ի N 07/80-2/18738-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 19-ի N 06/3-8/21507-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հուլիսի 19-ի N 02/14/9060-16 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի հուլիսի 18-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/6457-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) իրականացվող՝ 2,595,692 դրամ ընդհանուր արժեքով «Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2016 թվականի մայիսի 31-ին կնքված՝ N 160516 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաթնաղբյուր համայնքում բնակարանի մասնակի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 1,037,212 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2016 թվականի մայիսի 31-ին կնքված՝ N 240516 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևան քաղաքի Սարի թաղի 7-րդ փողոցի 6-րդ տան սանհանգույցի կառուցման աշխատանքների իրականացում՝ 819,610 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



3) «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2016 թվականի հունիսի 24-ին կնքված՝ N 170616 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Հաղարծին համայնքում բնակելի տան սանհանգույցի վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 738,870 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ      Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի
տնօրեն Ք. Զամբազյանի կողմից

«13»-ը հուլիսի 2016թ.

**«Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին»**
**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | **Ծրագրի նպատակը** | Աջակցել սոցիալապես անապահով 3 ընտանիքների՝ կատարելով վերանորոգման աշխատանքներ և բարելավելով նրանց բնակարանային պայմանները |
| 2. | **Ծրագրի բարեգործական որակման նպատակը** | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | **Բարեգործը** | Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամ (հասցե՝ Շվեյցարիա, Բեյնվիլ ամ Զեե CH 5712, Ֆելդշտրասսե 9) |
| 4. | **Ծրագիրը կատարողը** | Հայաստանի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս ՀՎՀՀ՝ 00068196) |
| 5. | **Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը** | Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Սարի թաղի 7-րդ փողոց, 6-րդ տուն՝ սոցիալական բնագավառ<br>Հայաստանի Հանրապետություն, Արագածոտնի մարզ, Կաքավաբերդ համայնք՝ սոցիալական բնագավառ<br>Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզ, Հաղարծին համայնք՝ սոցիալական բնագավառ |
| 6. | **Ծրագրի բյուջեն** | 2,595,692 դրամ |
| 7. | **Բարեգործություն ստացողը** | 1. Սոցիալապես անապահով ընտանիք՝ Օհանյան Սուսաննա (անձնագիր՝ AF0783225 տրվ. 21.11.2003թ. 009 կողմից, հեռախոս՝ 091.55.17.08)<br>2. Սոցիալապես անապահով ընտանիք՝ Թորոսյան Ծաղիկ (անձնագիր՝ AH0311774, տրվ. 24.01.2007թ. 019 կողմից, հեռախոս՝ 098.09.01.16)<br>3. Սոցիալապես անապահով ընտանիք՝ Բաղդյան Արթուր (անձնագիր՝ ն/բ 004848172, տրվ. 12.11.2014թ. 036 կողմից, հեռախոս՝ 098-30-82-80) |

| | | |
|---|---|---|
| 8. | **Ծրագրի իրականացման տևողությունը** | 2016 թվականի մայիսի 31-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 30-ը |
| 9. | **Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը** | 1. 2016 թվականի մայիսի 31-ից մինչև 2016թ. թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ք. Երևան, Սարի թաղի 7-րդ փողոց 6-րդ տուն հասցեում բնակելի տան մասնակի վերանորոգման աշխատանքներ՝ 819,610 դրամ ընդհանուր արժողությամբ:<br>2. 2016 թվականի մայիսի 31-ից մինչև 2016թ. թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում Արագածոտնի մարզի Կաքավաբերդ համայնքում բնակարանի մասնակի վերանորոգման աշխատանքներ՝ 1,037,212 դրամ ընդհանուր արժողությամբ:<br>3. 2016 թվականի հունիսի 24-ից մինչև 2016 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում Տավուշի մարզի Հաղարծին համայնքում բնակելի տան մասնակի վերանորոգման աշխատանքներ՝ 738,870 դրամ ընդհանուր արժողությամբ: |
| 10. | **Չեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը** | 1. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է բնակելի տան մասնակի վերանորոգման աշխատանքների իրականացման պայմանագիր, որի արժեքը կազմում է 819,610 դրամ:<br>2. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է Կաքավաբերդ համայնքում բնակարանի մասնակի վերանորոգման պայմանագիր, որի արժեքը կազմում է 1,037,212 դրամ:<br>3. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի միջև կնքվել է բնակելի տան մասնակի վերանորոգման աշխատանքների իրականացման պայմանագիր, որի արժեքը կազմում է 738,870 դրամ: |
| 11. | **Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը** | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | **Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ** | Հայաստանի Հանրապետության Երևանի քաղաքապետարան, Արագածոտնի մարզպետարան, Տավուշի մարզպետարան |
| 13. | **Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը** | Հաշվետվությունների [illegible] Շվեյցարիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամին և ՀՀ կառավարության [illegible] ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ սահմանված կարգով [illegible] |

Կազմեց՝ տնօրենի տեղակալ Վաhե Ավագյան
(անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ * CHARITABLE PROGRAMS COORDINATING COMMISSION OF THE GOVERNMENT OF RA * 02508251

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ-674-Ա**
**քաղ. Երևան**

## «ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԻ «ՍԱՐԵՐՈՒՄ» ՈՐՄՆԱՆԿԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 20-ի N 07/80-2/18784-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 15-ի N 06/3-8/21294-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հուլիսի 15-ի N 02/14/8962-16, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2016 թվականի հուլիսի 15-ի N 01/1.1/3449-15 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Նալբանդյան 29/9, ՀՎՀՀ՝ 01545737) իրականացվող՝ 83,585 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Հակոբ Հակոբյանի «Սարերում» որմնանկարի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված որմնանկարի վերանորոգման նյութերն ու պիտույքները (2 տեղ, 602 կգ ընդհանուր քաշով, 3,529.35 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 1,725 եվրո փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.



2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի խորհրդի նախագահ Ա. Ավետիսյանի կողմից

01» հուլիսի 2016.թ.

«Հակոբ Հակոբյանի «Սարերում» որմնանկարի վերականգնում» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանի Հանրապետության սեփականություն համարվող՝ «Քարհատ» մեքենա» փակ բաժնետիրական ընկերության ճաշարանի շենքում (հասցեն՝ քաղ. Գյումրի, Երևանյան խճուղի, 145ա) գտնվող Հակոբ Հակոբյանի «Սարերում» որմնանկարի ամրակայում, տեղափոխում և վերականգնում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանի մշակութային արժեքների պահպանության հիմնադրամ: |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամ (քաղ. Երևան, Նալբանդյան 29/9, ՀՎՀՀ՝ 01545737): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Գյումրի՝ մշակույթի բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 83,585 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետությունը՝ որմնանկարն անհատույց և անժամկետ ամրացվելու է «Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (հասցեն՝ քաղ. Գյումրի, Մայաք-Նովայի 4/20): |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2016 թվականի հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը: |

2

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Հայ և իտալացի մասնագետների միջոցով կատարվելու է՝<br>- նախապատրաստական աշխատանքներ (աշխատանքային պայմանների ստեղծում, անհրաժեշտ նյութերի ներմուծում և ձեռքբերում)՝ 2016 թվականի հուլիսի 1-ից մինչև հուլիսի 20-ը – 22,162 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ,<br>- որմնանկարի ամրակայում՝ 2016 թվականի հուլիսի 21-ից մինչև օգոստոսի 21-ը – 21,133 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ,<br>- որմնանկարի պոկում և տեղափոխում՝ 2016 թվականի օգոստոսի 22-ից մինչև սեպտեմբերի 6-ը – 18,250 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ,<br>- որմնանկարի տեղադրում և նկարչական վերականգնում՝ 2016 թվականի սեպտեմբերի 7-ից մինչև սեպտեմբերի 30-ը – 22,040 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Նախատեսվում է որմնանկարի վերականգնման համար անհրաժեշտ նյութերի (սոսինձ, ջերմամեկուսիչ սալեր, ապակեթել կտոր, ալյումինե կառուցվածքներ, ճապոնական թուղթ և այլն) ձեռքբերում և ներմուծում՝ 22,162 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, այդ թվում՝.<br>- ներմուծում Իտալիայից՝ 20,500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ,<br>- տեղում ձեռքբերում՝ 1,662 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցություն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրը իրականացվելու է ՀՀ կառավարության, ՀՀ մշակույթի նախարարության, ՀՀ Շիրակի մարզպետարանի, Գյումրու քաղաքապետարանի և ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանատան հետ համագործակցելով: |
| 13. | Ծրագրի իրականացման ընթացքի և վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Սահմանված կարգով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին կներկայացվեն տեղեկություններ ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ: |

«Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի տնօրեն

Ա. Թովմասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ-675-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 20-ի N 07/80-2/18783-16, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 15-ի N 06/3-8/21284-16 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հուլիսի 19-ի N ԱՄ/22.2/7958-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Direct Relief» միջազգային կազմակերպության կողմից ԱՄՆ-ի «Հայաստան-Արցախ» հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի (5 տեղ, 665.8 կգ ընդհանուր քաշով, 609,981.03 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,157.28 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման (բաշխման ցանկը կցվում է) ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

### «ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՑԱԽ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ

ՀԱՀ 038

| Հ/Հ | Դոնոր | Նկարագրություն | Ստացող | Կոդ | Արկղ | Քաշ (lbs) | Արժեք (ԱՄՆ դոլար) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | «Հայաստան Արցախ» հիմնադրամ (Direct Relief International) | Դեղեր | Մուրադյան Ա. – ՀՀ առողջապահության նախարարություն | Air 038-01 | 2 | 651 | 162,738.42 |
| 2. | «Հայաստան Արցախ» հիմնադրամ (Direct Relief International) | Դեղեր | Ավետիսյան Կ.- ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչություն | NKR Air 038-02 | 2 | 591 | 389,076.63 |
| 3. | «Հայաստան Արցախ» հիմնադրամ (Direct Relief International) | Դեղեր | Ղազարյան Ս.- «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ | Air 038-03 | 1 | 67 | 11,843.96 |
| 4. | «Հայաստան Արցախ» հիմնադրամ (Direct Relief International) | Դեղեր | Մինասյան Ա.- «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն | Air 038-04 | | 150 | 46,322.02 |
| | Ընդամենը | | | | 5 | 1,459 | 609,981.03 |

Nº 9/10.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ-676-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 20-ի N 07/80-2/18781-16, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 15-ի N 06/3-8/21286-16 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հուլիսի 18-ի N ԱՄ/22.2/7880-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «AmeriCares» հիմնադրամի կողմից ԱՄՆ-ի «Հայաստան-Արցախ» հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի և բժշկական նշանակության ապրանքների (82 տեղ (1,805 տուփ), 13,237 կգ ընդհանուր քաշով, 752,181.51 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,534 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման և անհատույց բաշխման (բաշխման ցանկը կցվում է) ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Նախագահ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## «ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՑԱԽ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ

ՀԱՀ 036

| Հ/Հ | Դոնոր | Նկարագրություն | Ստացող | Կոդ | Արկղ | Քաշ (lbs) | Արժեք (ԱՄՆ դոլար) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | «Հայաստան Արցախ» հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Մուրադյան Ա. – ՀՀ առողջապահության նախարարություն | Air 036-01 | 353 | 8,162 | 421,135.11 |
| 2. | «Հայաստան Արցախ» հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Ավետիսյան Կ.- ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչություն | NKR Air 036-02 | 493 | 13,621 | 206,647.31 |
| 3. | «Հայաստան Արցախ» հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Ղազարյան Ս.- «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ | Air 036-03 | 16 | 340 | 5,344.72 |
| 4. | «Հայաստան Արցախ» հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Մինասյան Ա.- «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն | Air 036-04 | 7 | 28 | 11,116.92 |
| 5. | «Հայաստան Արցախ»հիմնադրամ (AmeriCares) | Բժշկական պարագաներ | Մուրադյան Ա. – ՀՀ առողջապահության նախարարություն | Air 036-05 | 923 | 6,851 | 107,609.85 |
| 6. | «Հայաստան Արցախ» հիմնադրամ (AmeriCares) | Բժշկական պարագաներ | Ավետիսյան Կ.- ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչություն | Air 036-06 | 13 | 180 | 327.60 |
| | Ընդամենը | | | | 1,805 | 29,182 | 752,181.51 |

N 9/10.3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**22 հուլիսի 2016 թվականի N Մ-678-Ա**
**քաղ. Երևան**

# «ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 21-ի N 07/80-2/18902-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 20-ի N 06/3-8/21663-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի կահավորման համար ձեռք բերված գործվածքների (2 տեղ, 47 կգ ընդհանուր քաշով, 20,378 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով՝ ներառյալ 601 եվրո փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ-679-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-261-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 20-ի N 07/80-2/18753-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 15-ի N 06/3-8/21283-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված հիդրավլիկ շարժիչի պարագաները (մեկ տեղ, 12 կգ ընդհանուր քաշով, 995.49 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի զարգացմանը» ծրագրի մասին» N Մ-261-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ-680-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 23-Ի N Մ-215-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 20-ի N 07/80-2/18808-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 19-ի N 06/3-8/21481-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված «Apple iMac» համակարգիչները (8 հատ՝ մեկ տեղ, 99 կգ ընդհանուր քաշով, 10,490 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 450 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 23-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն - Գյումրի» ծրագրի մասին» N Մ-215-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի հունիսի 26-ի N Մ-680-Ա, դեկտեմբերի 16-ի N Մ-1359-Ա և 2016 թվականի մայիսի 20-ի N Մ-433-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                                 Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ-681-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 21-ի N 07/80-2/18859-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 20-ի N 06/3-8/21665-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված շոգեբաղնիքի համար նախատեսված լորենու մշակված տախտակները (17 տեղ, 513.4 կգ ընդհանուր քաշով, 37,521.21 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 15,000 ռուբլի, «ԵՏՄ» բեռ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա և 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**22 հուլիսի 2016 թվականի N Մ-682-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱ-ԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱ-ԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1**
**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 21-ի N 07/80-2/18860-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 20-ի N 06/3-8/21711-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված քիվերը (42 տեղ, 280.82 կգ ընդհանուր քաշով, 375,348.51 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 15,000 ռուբլի, «ԵՏՄ» բեռ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա և 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ-683-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1413-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 21-ի N 07/80-2/18871-16, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 20-ի N 06/3-8/21712-16 և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի հուլիսի 20-ի N ՖԲ/ԱնՄ-2-1/6545-16 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված մակարոնային արտադրանքը (2,000 տեղ, 20,400 կգ ընդհանուր քաշով, 43,200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 2,800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-1413-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում (բեռի ցանկը կցվում է):

2. Այս որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

*Բեռի բաշխման ցանկ*

հնվոյս P-D17071601 18.07.2016

| N N | Ապրանքի անվանումը | Շահառուները ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքը ըստ փաթեթների (ԱՄՆ-ի դոլար) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մակարոնային արտադրանք | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 74 | 341 | 737 |
| | | | Այգուտ | 164 | 757 | 1.634 |
| | | | Սարուխանի | 73 | 337 | 727 |
| | | | Դպրաբակ | 81 | 374 | 807 |
| | | | Վահան | 188 | 867 | 1.873 |
| | | | Կալավան | 23 | 106 | 229 |
| | | | Բարեպատ | 6 | 28 | 60 |
| | | | Ջրովանք | 31 | 143 | 309 |
| | | | Անտառամեջ | 22 | 101 | 219 |
| | | | Գավառ | 61 | 281 | 608 |
| | | | Թթուջուր | 81 | 374 | 807 |
| | | Արմավիրի մարզ | Արտաշար | 51 | 235 | 508 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 17 | 78 | 169 |
| | | | Արտաշատ | 16 | 74 | 159 |
| | | | Գետազատ | 39 | 180 | 389 |
| | | | Մրգանուշ | 16 | 74 | 159 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 13 | 60 | 130 |
| | | | Սևաբերդ | 41 | 189 | 409 |
| | | | Ջրառատ | 18 | 83 | 179 |
| | | | Արովյան | 38 | 175 | 379 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 48 | 221 | 478 |
| | | Տավուշի մարզ | Դիլիջան | 15 | 69 | 149 |
| | | | Իջևան | 18 | 83 | 179 |
| | | | | 3201 | 14770 | 31.898 |
| | Ընդամենը | | | 4335 | 20000 | 43.200 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն*

Մ. 9/10.15

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ-684- Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-1084-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի պատանեկան նվաճումներ» հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հայաստանի պատանեկան նվաճումներ» հասարակական կազմակերպության 2016 թվականի հունիսի 23-ի և հուլիսի 4-ի գրությունները ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 1-ի N 07/80-2/17559-16, ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հունիսի 30-ի N 06/3-8/19742-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հոկտեմբերի 2-ի «Ձեռնարկատիրական և քաղաքացիական կրթության իրականացում» բարեգործական կրթական ծրագրի մասին» N Մ-1084-Ա որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1) որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետի 8-րդ փուլի 2-րդ ենթակետերում «100 լավագույն աշակերտներին ընտրելու նպատակով,» բառերը փոխարինել «143 լավագույն աշակերտներին և 20 ուսուցիչներին ընտրելու նպատակով,» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 14-րդ ենթակետերում «100 լավագույն աշակերտների համար ամառային ճամբարի կազմակերպում» բառերը փոխարինել «143 լավագույն աշակերտների և 20 ուսուցիչների համար ամառային ճամբարի կազմակերպում» բառերով:

2. Սահմանել, որ «Հայաստանի պատանեկան նվաճումներ» հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 01559706) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝



1) «Ռիպա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03013816) 2016 թվականի հունիսի 16-ին կնքված՝ N 1-06/2016 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 143 աշակերտի և 20 ուսուցչի համար ամառային ճամբարի կազմակերպում՝ 7,335,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Արֆարմացիա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02505735) 2016 թվականի հունիսի 20-ին կնքված՝ N 600578 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է դեղերի, դեղամիջոցների, բժշկական պարագաների գնում՝ 59,547 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**22 հուլիսի 2016 թվականի N Մ-685- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1407-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 11-ի N 07/80-2/18061-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 8-ի N 06/3-8/20559-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Օրրան» օգնություն կարիքավոր ընտանիքներին» ծրագրի մասին» N Մ-1407-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00040569) 2016 թվականի հունիսի 29-ին կնքված՝ N AT-AU-052-16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2015 թվականի ֆինանսական տարվա աուդիտորական ծառայությունների մատուցում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**22 հուլիսի 2016 թվականի N Մ-686- Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N Մ-930-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ** (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 13-ի N 07/80-2/18211-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 13-ի N 06/3-8/20973-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի «Հարավային Կովկասի (Հայաստան) էկոլոգիական միջանցքներում կենսաբազմազանության պահպանության համայնքային մոդելների ստեղծում» ծրագրի մասին» N Մ-930-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 20-ի N Մ-450-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Այ էֆ Փի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00125588) 2016 թվականի հունիսի 29-ին կնքված՝ N Ա-07-16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2014-2015 թվականների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացում՝ 1,050,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**22 հուլիսի 2016 թվականի N Մ-687- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-267-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 18-ի N 07/80-2/18618-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հուլիսի 13-ի N ԱՄ/22.2/7710-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 13-ի N 06/3-4/21086-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ ՀԱՆ-ի հիմնադիր «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական գրասենյակի կողմից ուղարկված՝ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (վիրահատական պարագաներ՝ ներակնային ոսպնյակներ, պրովիսկ և դեղորայք՝ 17 տեղ, 165 կգ, 177,722.24 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1,320 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լույս՝ հայի աչքերին» (ութերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**22 հուլիսի 2016 թվականի N Մ-688- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N Մ-1212-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
**(«Արամազդ» երիտասարդության աջակցության բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Արամազդ» երիտասարդության աջակցության բարեգործական հիմնադրամի 2016 թվականի հուլիսի 11-ի գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 20-ի N 07/80-2/18811-16, ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 19-ի N 06/3-8/21503-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի «Արամազդ» երիտասարդության աջակցության բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոցի N 97 հասցեում գտնվող՝ տեղական նշանակության հուշարձան հանդիսացող կիսաքանդ շենքի վերականգնում» ծրագրի մասին» N Մ-1212-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1) որոշման 1-ին կետում «49,926,147» թիվը փոխարինել «58, 088,647» թվով.

2) որոշման 2-րդ կետի երկրորդ պարբերությունում «2015 թվականի սեպտեմբերի 11-ին կնքված՝ պայմանագրում» բառերից հետո կարդալ «ու 2016 թվականի հունիսի 30-ի N 3 համաձայնագրում» բառերը և «49,926,147» թիվը փոխարինել «58, 088,647» թվով.

3) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին ու Գյումրու քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ	Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
КОМИССИЯ ПРАВИТЕЛЬСТВА РА ПО КООРДИНАЦИИ БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ПРОГРАММ
COORDINATING COMMISSION OF THE GOVERNMENT OF RA CHARITABLE PROGRAM
02508251

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Արամազդ» Երիտասարդության

Աջակցության Բարեգործական Հիմնադրամի

Հոգաբարձուների խորհրդի կողմից

Նախագահ՝ ____________ Վլադիկ Քոչունց

8 հուլիս 2016թ

# Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն  Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոցի թիվ 97 հասցեում գտնվող՝ տեղական նշանակության հուշարձան հանդիսացող կիսաքանդ շենքի վերականգնում

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է վերականգնել ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոցի թիվ 97 հասցեում գտնվող՝ տեղական նշանակության հուշարձան հանդիսացող կիսաքանդ շենքը:<br><br>Վերականգնված շենքում հետագայում նախատեսում է կազմակերպել երիտասարդական կենտրոն՝ երիտասարդության կրթական, մշակութային և գիտական առաջընթացին և զարգացմանը նպաստելու, երիտասարդության գիտելիքների, կարողությունների, հմտությունների, նրա դաստիարակության և զարգացման, կրթության միջոցների բարեփոխմանը աջակցելու, երիտասարդ սերնդի մտավոր ակտիվության և ստեղծագործական ունակությունների զարգացման ու բարոյական պատասխանատվության ձևավորմանը աջակցելու համար: Այդուհանդերձ, ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոցի թիվ 97 հասցեում գտնվող՝ տեղական նշանակության հուշարձան հանդիսացող կիսաքանդ շենքի վերականգնումն ինքնուրույն ծրագիր է և այն երիտասարդական կենտրոնի կազմակերպման վերոնշված ծրագրի բաղկացուցիչ մասը չի կազմում: Երիտասարդկան կենտրոնի կազմակերպման ծրագիրը դեռևս մշակման փուլում է: Ծրագրի բյուջեն, իրականացման միջոցառումներն ու ժամկետները հստակեցվելուց հետո՝ այդպիսի անհրաժեշտություն առաջանալու դեպքում, այն կներկայացվի առանձին՝ բարեգործական որակելու նպատակով: |



| | | |
|---|---|---|
| 2. | Ծրագրի բարեգործական ուղղվածության [illegible] | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային արտոնությունից՝ համաձայն ՀՀ Կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի թիվ 66-Ն որոշմամբ հաստատված "Բարեգործական ծրագիրը բարեգործական որակելու և գրանցելու կարգի" 3-րդ կետի: |
| 3. | Բարեգործը | Հայ Մշակութային Հաստատությունը (Ամերիկայի Միացյալ Նահանգների Կալիֆորնիա նահանգի օրենքներին համապատասխան ստեղծված և 104 N. Belmont St., Suite 200, Glendale, CA 91206 հասցեում գործող ոչ պետական (ոչ առևտրային) կազմակերպություն): |
| 4. | Ծրագիրը Կատարողը | «Արամազդ» Երիտասարդության Աջակցության Բարեգործական Հիմնադրամը (ՀՎՀՀ-ն՝ 01238531, հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Մարգարյան նրբանցք, № 3 շենք, բն. № 319, հեռախոս՝ 091 429134): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրը կիրականացվի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքում:<br>Ծրագրի իրականացման բնագավառը՝ մշակույթի բնագավառն է: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոցի թիվ 97 հասցեում գտնվող՝ տեղական նշանակության հուշարձան հանդիսացող կիսաքանդ շենքի վերականգնման շինարարական աշխատանքների նախահաշվային արժեքն է, որը կազմում է 58,088,647 (հիսունութ միլիոն ութսունութ հազար վեց հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ-ի): |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Շինարարական կապալի պայմանագրով շինարարական աշխատանքները նախատեսված է իրականացնել 15.05.2015թ.-ից մինչև 15.06.2016թ.-ը: Այդուհանդերձ Ծրագիրը իրականացման ավարտի ժամկետ է նախատեսվում 2016 թվականի հոկտեմբերի 1-ը՝ հաշվի առնելով զանազան հավանական հանգամանքների հետևանքով շինարարական աշխատանքների ավարտի ժամկետի հետաձգման հնարավորությունը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Կիսաքանդ շենքի վերականգնումը ներառում է ստորև նշված աշխատանքների կատարումը՝ հետևյալ արժեքներով (առանց ԱԱՀ-ի) և ժամկետներում՝<br>1. Շրջանակ "3" առանցքով "Ա-Բ" հատույթով – 852,328 դրամ (2015թ.-ի հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներ),<br>2. Պատեր – 7,347,743 դրամ (2015թ.-ի հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներ), |

| | | |
|---|---|---|
| | | 3. Նկուղային հարկի ծածկի ամրացում (նիշ *0,00) – 430,194 հազ. դրամ (2015թ.-ի նոյեմբեր ամիս),<br>4. Միջնորմեր – 318,336 հազ. դրամ (2015թ.-ի դեկտեմբեր և 2016թ.-ի հունվար ամիսներ),<br>5. Ծածկ 4.4. նիշի վրա – 3, 252,216 հազ. դրամ (2015թ.-ի դեկտեմբեր ամիս),<br>6. Տանիք – 6, 099, 052 դրամ (2015թ.-ի դեկտեմբեր և 2016թ.-ի հունվար ամիսներ),<br>7. Պատուհաններ – 2, 862, 756 դրամ (2016թ.-ի փետրվար, մարտ, ապրիլ ամիսներ),<br>8. Դռներ – 2, 020, 982 դրամ (2016թ.-ի փետրվար, մարտ, ապրիլ ամիսներ),<br>9. Հատակներ – 5 106,005 դրամ (2016թ.-ի փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, հունիս ամիսներ),<br>10. Ներքին հարդարման աշխատանքներ – 6, 738,255 դրամ (2016թ.-ի փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, հունիս ամիսներ),<br>11. Ներքին ջրամատակարարում – 242,728 դրամ (2016թ.-ի մայիս, հունիս ամիսներ),<br>12. Ներքին կոյուղի – 390, 301 հազ. դրամ (2016թ.-ի մայիս, հունիս ամիսներ),<br>13. Ներքին ջեռուցում – 3, 138,351 դրամ (2016թ.-ի մայիս, հունիս ամիսներ),<br>14. Օդափոխություն – 323,909 (2016թ.-ի մայիս ամիս),<br>15. Էլեկտրոուժային սարքավորումներ - 652, 925 դրամ (2016թ.-ի մայիս, հունիս ամիսներ),<br>16. Ներքին էլեկտրալուսավորության վարդակներ – 3 385,359 դրամ (2016թ.-ի փետրվար, մայիս, հունիս ամիսներ),<br>17. Ջրի և կենցաղային կոյուղու արտաքին ցանց - 1, 078,969 դամ (2016թ.-ի մայիս ամիս),<br>18. Տարածքի բարեկարգում – 13,349,205 դրամ (2015թ.-ի հոկտեմբեր, 2016թ.-ի ապրիլ, մայիս, հունիս ամիսներ),<br>19. Կապի ցանց - 499,033 դրամ (2016թ.-ի հուլիս ամիս):<br>Այսպիսով կիսաքանդ շենքի վերականգնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները կազմում են՝ ընդամենը 58,088,647 դրամ, իսկ աշխատանքները նախատեսվում է իրականացնել 10 ամսվա ընթացքում՝ 2015թ.-ի հոկտեմբերից մինև 2016թ.-ի հուլիս ամիսը ներառյալ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, | Կապալի պայմանագրի հիման վրա ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ղորղանյան փողոցի թիվ 97 հասցեում գտնվող՝ տեղական նշանակության հուշարձան |





| | | |
|---|---|---|
| | ծավալները և նախատեսվող գինը | հանդիսացող կիսաքանդ շենքի վերականգնման աշխատանքները կիրականացնի “Մեծն Էրիկ” սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ՀՎՀՀ-ն՝ 05502622, ՀՀ, Շիրակի մար, քաղաք Գյումրի, Մ. Խորենացի փողոց, շենք № 60/1, լիցենզիա թիվ 14084՝ տրված ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից, 01.04.2010թ.-ին):<br>Կապալի պայմանագրի գինը 58,088,647 (հիսունութ միլիոն ութսութ հազար վեց հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամ (առանց ԱԱՀ-ի): |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, ՀՀ Մշակույթի, Սպորտի և երիտասարդության հարցերի, Քացաքաշինության, Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունների, Շիրակի մարզպետարանի և Գյումրու քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությանը մասնակցելու է բարեգործի՝ Հայ Մշակույթի Հաստատության ներկայացուցիչը: Վերջինս, մասնավորապես, կմասնակցի շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացմանը, աշխատանքների արդյունքների ընդունմանը: |

Բարեգործական ծրագիրը պատրաստող՝

Գիրագոս Մանոյան
«Արամազդ» Երիտասարդության
Աջակցության Բարեգործական
Հիմնադրամի Տնօրեն

8 հուլիս 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**22 հուլիսի 2016 թվականի N Մ-689- Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N Մ-170-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 20-ի N 07/80-2/18829-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 20-ի N 06/3-8/21662-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01511187) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մարտի 18-ի «Նորարարության և տեխնոլոգիաների ինկուբացիոն կենտրոնի հիմնադրում» N Մ-170-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01831375) 2016 թվականի փետրվարի 23-ին կնքված պայմանագրում և մայիսի 20-ի համաձայնագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Նորարարության և տեխնոլոգիաների ինկուբացիոն կենտրոնի տարածքի վերանորոգում և կահույքի ձեռքբերում՝ 15,212,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**22 հուլիսի 2016 թվականի N Մ-690- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍ-ՏՈՍԻ 28-Ի N Մ-930-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ** (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia)

---

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) 2016 թվականի հուլիսի 20-ի N 55 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 15-ի N 07/80-2/18482-16 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 12-ի N 06/3-4/20827-16 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի «Հարավային Կովկասի (Հայաստան) էկոլոգիական միջանցքներում կենսաբազմազանության պահպանության համայնքային մոդելների ստեղծում» ծրագրի մասին» N Մ-930-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 20-ի N Մ-450-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հ. Պողոսյան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06938057) 2016 թվականի հունիսի 23-ին կնքված՝ N 17/16-AM0016 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Վայոց ձորի մարզի Գետափ գյուղի հարևանությամբ մրգերի արևային չորացման կենտրոնի կառուցման



աշխատանքների իրականացում՝ 18,501,780 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԳԱՍ» շենքերի ու կառույցների տեխնիկական հսկողություն ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01563737) 2016 թվականի հունիսի 23-ին կնքված՝ N 17.1/16-AM0016 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Վայոց ձորի մարզի Գետափ գյուղի հարևանությամբ մրգերի արևային չորացման կենտրոնի կառուցման աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների իրականացում՝ 600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան մ/ճ-ի տնօրեն Կարեն Մանվելյանի,

«20» հուլիսի, 2016թ

Հարավային Կովկասի (Հայաստան) էկոլոգիական միջանցքներում
կենսաբազմազանության պահպանության համայնքային մոդելների ստեղծում

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ՀՀ Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի Արենի, Խաչիկ, Գնիշիկ (Մոզրով), Տաթև, Տաճատափ և Սվարանց համայնքներին աջակցություն ցուցաբերել ապրուստի դիվերսիֆիկացումը զարգացնելու համար՝ ստեղծելով խթաններ և այլընտրանքային ապրուստի միջոցներ վաստակելու հնարավորություններ՝ պահպանելու համար կենսաբազմազանությունը և էկոհամակարգային ծառայությունները, այսպիսով նվազեցնելու բնական ռեսուրսների ոչ կայուն օգտագործումը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել ՀՀ օրենքով սահմանված հարկային արտոնություններից՝ համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 16-ի N 66 որոշման |
| 3. | Բարեգործը | *Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ),*<br>Հասցե՝ Am Sportplatz 30, 63791 Karlstein am Main, Germany, (Ամ Սփորտպլաթզ 30, 63791, Կառլշտեյն ամ Մայն, Գերմանիա)<br>Հեռ՝ +49 6188 99560<br><br>*և WWF-Գերմանիա:*<br>Հասցե՝ Reinhardtstraẓe 18 10117 Berlin, Germany (Ռեյնհարդշտրասե փողոց 18, 10117 Բեռլին, Գերմանիա)<br>Հեռ.՝ +49 30 31 17 77 0<br>+49 30 31 17 77 199 |
| 4. | Ծրագիրը կատարողը | *Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մ/ճ (WWF-Հայաստան)*<br>ք. Երևան, Լյուքսեմբուրգի փ., 7₂., բն. 19 (իրավ.)<br>ք. Երևան, Պռոշյան 11 (գործ.)<br>ՀՎՀՀ՝ 00861992<br>Հեռ՝ +374 10 58 89 83<br>+374 10 54 61 56<br>Էլ. հասցե՝ office_am@wwfcaucasus.org |

2

| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Վայր՝ Վայոց Ձորի մարզի Գնիշիկ պահպանվող լանդշաֆտ և հարակից տարածքներ, Սյունիքի մարզի Որոտան գետի կիրճը և հարակից տարածքներ:<br>Բնագավառ՝ կենսաբազմազանության պահպանություն և համայնքների զարգացում» |
| 6. | Ծրագրի բյուջեն | 494,021 (չորս հարյուր իննսունչորս հազար քսանմեկ) Եվրո: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Վայոց Ձորի, Սյունիքի մարզեր և հարակից համայնքներ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.06.2015-31.12.2017 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | |

| Ծրագրի բաղադրիչների գործողությունները | Ժամկետներ | Արժույթը Եվրոյով |
|---|---|---|
| 1. Կադաստրային տվյալների վերանայման և վերլուծման, հողօգտագործման պլանավորման մասնակցային հանդիպումների կազմակերպման ծառայություններ, ինչպես նաև դրանց կազմակերպում, վերահսկում և իրագործում | հունվար 2015 - հոկտեմբեր 2015 | 5,853 |
| 2. հողօգտագործման պլանի մշակում | հունիս 2016-դեկտեմբեր 2016 | 4,798 |
| 3. «Սատանի Կամուրջ» բնության հուշարձանի պահպանության կարգավիճակի օրինականացման ուղղված ծառայությունների մատուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հունիս 2015 – դեկտեմբեր 2015 | 3,047 |
| 4. «Սատանի Կամուրջ» բնության հուշարձանի գերակա պլանի մշակում | հուլիս 2015-սեպտեմբեր 2015 | 8,000 |
| 5. Թիրախային համայնքներում արոտավայրերի բարելավման և կայուն կառավարման միջոցների կիրառման ուղղված ծառայությունների իրականացում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հուլիս 2016 – հունիս 2017 | 9,821 |
| 6. Տեղի ֆերմերների վերապատրաստման միջոցառումների իրականացում | մարտ 2017-հունիս 2017 | 3,054 |
| 7. «Տաթևի» և «Գնիշիկի» պահպանվող տարածքներում պահակակետերի տեղադրում, դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | մայիս 2016-նոյեմբեր 2016 | 8,712 |
| 8. «Տաթևի» և «Գնիշիկի» պահպանվող տարածքների | հուլիս 2015 – դեկտեմբեր 2015 | 1,375 |

| | | |
|---|---|---|
| տեսուչների համար սարքավորումների ձեռքբերում (քարտեզագրական գործիքներ, հեռադիտակներ, հեռահաղորդակցության միջոցներ, ձիեր, թամբեր, առաջին օգնության պարագաներ, թաքնված տեսախցիկներ և այլն): Գործողությաան կազմակերպում, վերահսկում և իրագործում | հունվար 2016 - դեկտեմբեր 2016 | 8,538 |
| | հունվար 2017 - հունիս 2017 | 15,381 |
| 9. Տաթևի տարածաշրջանում էկոտուրիզմի ենթակառուցվածքի զարգացմանն ուղղված ծառայությունների մատուցում (տեղեկատվական նյութերի և ցուցանակների պատրաստում, տուրիստական երթուղիների մշակում և բարելավում, ժամանցային տաղավարների պատրաստում, կանաչապատման աշխատանքներ), ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հոկտեմբեր 2016 – հոկտեմբեր 2017 | 30,349 |
| 10. Տաթևի տարածաշրջանում զբոսաշրջության տեղեկատվական կենտրոնի կառուցում: Դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հուլիս 2015-դեկտեմբեր 2015 | 0 |
| 11. Էկոտուրիզմի վերաբերյալ վերապատրաստման միջոցառումներին ուղղված ծառայությունների մատուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | ապրիլ 2016-հոկտեմբեր 2017 | 7,178 |
| 12. Արենի, Խաչիկ, Մոզրով թիրախային համայնքներում խմելու և ոռոգման ջրատարների վերականգնման ուղղված ծառայությունների մատուցում, ինչպես նաև գործունեության կազմակերպում, վերահսկում և իրագործում | մայիս 2015 – դեկտեմբեր 2015 | 39,174 |
| 13. Տաթև, Սվարանց և Տանձատափ թիրախային համայնքներում գյուղական ենթակառուցվածքի բարելավում (խմելու ջրատարների վերականգնում, փողոցների լուսավորում, աղբի կառավարում) | մայիս 2015 – դեկտեմբեր 2015 | 26,469 |
| 14. Խաչիկ համայնքին էներգախնայող վառարանների տրամադրում: Դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | սեպտեմբեր 2017-դեկտեմբեր 2017 | 5,000 |
| 15. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար գյուղմթերքի հավաքագրման և վաճառման խանութի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում Վերջիններս պատկանելու են երեք համայնքների | հունիս 2016-դեկտեմբեր 2016 | 59,479 |



| | | |
|---|---|---|
| (Գնիշիկ, Խաչիկ և Արենի) կողմից ստեղծված «Գնիշիկ» միջհամայնքային հիմնադրամին:<br><br>Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների գյուղմթերքների հավաքագրման և վաճառման խանութի համար ՈՒԱԶ 23632-148 մակնիշի ավտոմեքենայի ձեռք բերում | նոյեմբեր 2015 | 13,930 |
| 16. Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար գյուղմթերքի հավաքագրման և վաճառման խանութի համար սարքավորումների ձեռքբերում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | մարտ 2016-դեկտեմբեր 2016 | 17,235 |
| 17. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար արևային չորանոցի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում: Այն պատկանելու է երեք համայնքների (Գնիշիկ, Խաչիկ և Արենի) կողմից ստեղծված «Գնիշիկ» միջհամայնքային հիմնադրամին և շահառուների կողմից օգտագործվելու է բացառապես անվճար հիմունքներով: | մայիս 2016-դեկտեմբեր 2016 | 40,204 |
| 18. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Սյունիքի թիրախային համայնքներում գյուղական ապրանքի հավաքագրման կետի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում: Պատկանելու է Տաթև համայնքին և գործելու է բացառապես անվճար հիմունքներով: | մարտ 2016 – դեկտեմբեր 2016 | 32,715 |
| 19. Սյունիքի թիրախային համայնքներում գյուղական ապրանքի հավաքագրման կետի համար տարբեր կահավորանքի և սարքավորումների ձեռքբերում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հունիս 2016-դեկտեմբեր 2016 | 17,235 |
| 20. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի և Սյունիքի թիրախային համայնքներում գյուղմթերքի արտադրման, փաթեթավորման և իրացման աշխատանքային խմբերի կազմակերպում և վերապատրաստման միջոցառումների և մասնակցային | սեպտեմբեր 2016-սեպտեմբեր 2017 | 54,450 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | հանդիպումների իրականացում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | | |
| | | 21. գրասենյակի վարձավճար | 2015<br>2016<br>2017 | 2624<br>2640<br>2200 |
| | | 22. գրասենյակի պահպանման ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 1,184<br>1,200<br>1,000 |
| | | 23. ավտոմեքենաների պահպանման և ապահովագրության ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 7,194<br>6,167<br>5,139 |
| | | 24. հեռահաղորդակցություն և կապի ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 1,399<br>1,320<br>1,100 |
| | | 25. գործուղումներ | 2015<br>2016<br>2017 | 3,166<br>2,713<br>2,261 |
| | | 26. աուդիտ | 2015<br>2016<br>2017 | 2,000<br><br>3,500 |
| | | 27. Ծրագրի ղեկավարի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 744<br>744<br>744 |
| | | 28. Հասարակայնության և կապի պատասխանատու անձի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 667<br>667<br>667 |
| | | 29. Ծրագրի օգնականի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 7,400<br>7,400<br>7,400 |
| | | 30. Աշխարհագրատեղեկատվական մասնագետի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 1,600<br>1,600<br>1,600 |



| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 31. Ծրագրի ադմինիստրատորի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 1,328<br>1,328<br>1,328 |
| | | Ընդամենը | | 494,021 |
| 10. | Ձեռք բերվող (Ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախահաշվային գինը | Ծրագրի բաղադրիչների գործողությունները | Ժամկետներ | Արժույթը Եվրոյով |
| | | 1. Կադաստրային տվյալների վերանայման և վերլուծման, հողօգտագործման պլանավորման մասնակցային հանդիպումների կազմակերպման ծառայություններ, ինչպես նաև դրանց կազմակերպում, վերահսկում և իրագործում | հունվար 2015 - հոկտեմբեր 2015 | 5,853 |
| | | 2. հողօգտագործման պլանի մշակում | հունիս 2016-դեկտեմբեր 2016 | 4,798 |
| | | 3. «Սատանի Կամուրջ» բնության հուշարձանի պահպանության կարգավիճակի օրինականացման ուղղված ծառայությունների մատուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հունիս 2015 – դեկտեմբեր 2015 | 3,047 |
| | | 4. «Սատանի Կամուրջ» բնության հուշարձանի գերակա պլանի մշակում | հուլիս 2015-սեպտեմբեր 2015 | 8,000 |
| | | 5. Թիրախային համայնքներում արոտավայրերի բարելավման և կայուն կառավարման միջոցների կիրառման ուղղված ծառայությունների իրականացում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հուլիս 2016 – հունիս 2017 | 9,821 |
| | | 6. Տեղի ֆերմերների վերապատրաստման միջոցառումների իրականացում | մարտ 2017-հունիս 2017 | 3,054 |
| | | 7. «Տաթևի» և «Գնիշիկի» պահպանվող տարածքներում պահակակետերի տեղադրում, դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | մայիս 2016-նոյեմբեր 2016 | 8,712 |
| | | 8. «Տաթևի» և «Գնիշիկի» պահպանվող տարածքների | հուլիս 2015 – դեկտեմբեր 2015 | 1,375 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | տեսուչների համար սարքավորումների ձեռքբերում (քարտեզագրական գործիքներ, հեռադիտակներ, հեռահաղորդակցության միջոցներ, ձիեր, թամբեր, առաջին օգնության պարագաներ, թաքնված տեսախցիկներ և այլն)։ Գործողության կազմակերպում, վերահսկում և իրագործում | հունվար 2016 - դեկտեմբեր 2016 | 8,538 |
| | | | հունվար 2017 - հունիս 2017 | 15,381 |
| | | 9. Տաթևի տարածաշրջանում էկոտուրիզմի ենթակառուցվածքի զարգացմանն ուղղված ծառայությունների մատուցում (տեղեկատվական նյութերի և ցուցանակների պատրաստում, տուրիստական երթուղիների մշակում և բարելավում, ժամանցային տաղավարների պատրաստում, կանաչապատման աշխատանքներ), ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | | |
| | | | հոկտեմբեր 2016 – հոկտեմբեր 2017 | 30,349 |
| | | 10. Տաթևի տարածաշրջանում զբոսաշրջության տեղեկատվական կենտրոնի կառուցում։ Դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հուլիս 2015-դեկտեմբեր 2015 | 0 |
| | | 11. Էկոտուրիզմի վերաբերյալ վերապատրաստման միջոցառումներին ուղղված ծառայությունների մատուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | ապրիլ 2016-հոկտեմբեր 2017 | 7,178 |
| | | 12. Արենի, Խաչիկ, Մոզրով թիրախային համայնքներում խմելու և ոռոգման ջրատարների վերականգնման ուղղված ծառայությունների մատուցում, ինչպես նաև գործունեության կազմակերպում, վերահսկում և իրագործում | մայիս 2015 – դեկտեմբեր 2015 | 39,174 |
| | | 13. Տաթև, Սվարանց և Տանձատափ թիրախային համայնքներում գյուղական ենթակառուցվածքի բարելավում (խմելու ջրատարների վերականգնում, փողոցների լուսավորում, աղբի կառավարում) | մայիս 2015 – դեկտեմբեր 2015 | 26,469 |
| | | 14. Խաչիկ համայնքին էներգախնայող վառարանների տրամադրում։ Դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | սեպտեմբեր 2017-դեկտեմբեր 2017 | 5,000 |
| | | 15. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար գյուղմթերքի հավաքագրման և վաճառման խանութի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում Վերջիններս պատկանելու են երեք համայնքների | հունիս 2016-դեկտեմբեր 2016 | 59,479 |



| | | | | |
|---|---|---|---|---|
| | | (Գնիշիկ, Խաչիկ և Արենի) կողմից ստեղծված «Գնիշիկ» միջհամայնքային հիմնադրամին։<br><br>Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների գյուղմթերքների հավաքագրման և վաճառման խանութի համար ՌԻԱԶ 23632-148 մակնիշի ավտոմեքենայի ձեռք բերում | նոյեմբեր 2015 | 13,930 |
| | | 16. Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար գյուղմթերքի հավաքագրման և վաճառման խանութի համար սարքավորումների ձեռքբերում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | մարտ 2016-դեկտեմբեր 2016 | 17,235 |
| | | 17. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի մարզի թիրախային համայնքների համար արևային չորանոցի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում։ Այն պատկանելու է երեք համայնքների (Գնիշիկ, Խաչիկ և Արենի) կողմից ստեղծված «Գնիշիկ» միջհամայնքային հիմնադրամին և շահառուների կողմից օգտագործվելու է բացառապես անվճար հիմունքներով։ | մայիս 2016-դեկտեմբեր 2016 | 40,204 |
| | | 18. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Սյունիքի թիրախային համայնքներում գյուղական ապրանքի հավաքագրման կետի կառուցում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում։ Պատկանելու է Տաթև համայնքին և գործելու է բացառապես անվճար հիմունքներով։ | մարտ 2016 – դեկտեմբեր 2016 | 32,715 |
| | | 19. Սյունիքի թիրախային համայնքներում գյուղական ապրանքի հավաքագրման կետի համար տարբեր կահավորանքի և սարքավորումների ձեռքբերում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | հունիս 2016-դեկտեմբեր 2016 | 17,235 |
| | | 20. Այլընտրանքային ապրելամիջոցների հնարավորությունների զարգացման նպատակով Վայոց Ձորի և Սյունիքի թիրախային համայնքներում գյուղմթերքի արտադրման, փաթեթավորման և իրացման աշխատանքային խմբերի կազմակերպում և վերապատրաստման միջոցառումների և մասնակցային | սեպտեմբեր 2016-սեպտեմբեր 2017 | 54,450 |

| | | | |
|---|---|---|---|
| | | hանդիպումների իրականացում, ինչպես նաև դրա կազմակերպում, վերահսկում և իրագործում | | |
| | | 21. գրասենյակի վարձավճար | 2015<br>2016<br>2017 | 2624<br>2640<br>2200 |
| | | 22. գրասենյակի պահպանման ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 1,184<br>1,200<br>1,000 |
| | | 23. ավտոմեքենաների պահպանման և ապահովագրության ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 7,194<br>6,167<br>5,139 |
| | | 24. հեռահաղորդակցություն և կապի ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 1,399<br>1,320<br>1,100 |
| | | 25. գործուղումներ | 2015<br>2016<br>2017 | 3,166<br>2,713<br>2,261 |
| | | 26. աուդիտ | 2015<br>2016<br>2017 | 2,000<br><br>3,500 |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Ժամկետներ | Արժույթը Եվրոյով |
| | | 1. գրասենյակի վարձավճար | 2015<br>2016<br>2017 | 2624<br>2640<br>2200 |
| | | 2. գրասենյակի պահպանման ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 1,184<br>1,200<br>1,000 |



| | | | |
|---|---|---|---|
| | | 3. ավտոմեքենաների պահպանման և ապահովագրության ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 7,194<br>6,167<br>5,139 |
| | | 4. հեռահաղորդակցություն և կապի ծախսեր | 2015<br>2016<br>2017 | 1,399<br>1,320<br>1,100 |
| | | 5. գործուղումներ | 2015<br>2016<br>2017 | 3,166<br>2,713<br>2,261 |
| | | 6. աուդիտ | 2015<br>2016<br>2017 | 2,000<br><br>3,500 |
| | | 7. Ծրագրի ղեկավարի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 744<br>744<br>744 |
| | | 8. Հասարակայնության և կապի պատասխանատու անձի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 667<br>667<br>667 |
| | | 9. Ծրագրի օգնականի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 7,400<br>7,400<br>7,400 |
| | | 10. Աշխարհագրատեղեկատվական մասնագետի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 1,600<br>1,600<br>1,600 |
| | | 11. Ծրագրի ադմինիստրատորի աշխատավարձ | 2015<br>2016<br>2017 | 1,328<br>1,328<br>1,328 |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | • ՀՀ բնապահպանության նախարարություն<br>• Տարածքային կառավարման նախարարություն<br>• Գերմանիայի դաշնային հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարություն (BMZ)<br>• Գերմանական համագործակցություն (GIZ)<br>• Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն հիմնադրամ (CARD)<br>• Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն (ՓՄՁ ԶԱԿ) | | |

| | | |
|---|---|---|
| | | • OXFAM Ինթերնեյշնլ<br>• Արենի, Խաչիկ և Գնիշիկ/Մոզրով (Վայոց Ձոր), Տաթև, Տանձատափ և Սվարանց (Սյունիք) համայնքապետարաններ<br>• «Գնիշիկ» միջհամայնքային բնապահպանական հիմնադրամ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ)՝ ֆինանսական և տեխնիկական հաշվետվությունների միջոցով<br>• WWF-Գերմանիա՝ ֆինանսական և տեխնիկական հաշվետվությունների միջոցով<br>• ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով՝ հաշվետվությունների միջոցով:<br>• Ներքին և արտաքին աուդիտի միջոցով |

Տնօրեն՝ Կարեն Մանվելյան , (WWF-Հայաստան)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ-691-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Ս. Վ. ՄԱԼԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 8-ի N 07/80-2/17912-16, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հուլիսի 12-ի N ԱՄ/22.2/7595-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 11-ի N 06/3-8/20689-16 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Իտալիայից՝ անհատ բարերար Լարիսա Նաովիշկինայի կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ուղարկված բեռի (դեղ և բժշկական պարագաներ՝ 2 տեղ, 80 կգ ընդհանուր քաշով, 3,435 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

Ներմուծվող դեղը և բժշկական պարագաները նախատեսված են քրոնիկական փայտանման կոնյուկտիվիտ հիվանդությամբ տառապող երեխայի՝ Հակոբ Ռոմանոսի Ավդալյանի համար (բնակության հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, քաղ. Մարալիկ, Ռիգայի 104 տուն):

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ - 692 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 18-ի N 07/80-2/18636-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 13-ի N 06/3-8/21028-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Հայոց թեմի կողմից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված գրիչների և նոթատետրերի (2 տեղ, 18.14 կգ ընդհանուր քաշով, 550 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Գևորգյան հոգևոր ճեմարանի սաների համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**22 հուլիսի 2016 թվականի N Մ- 693 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի N Մ-575-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
(«Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան»)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 18-ի N 07/80-2/18637-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 14-ի N 06/3-8/21098-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից (ՀՎՀՀ 00053474) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2016 թվականի հուլիսի 1-ի «Հայ-Ռուսական (Սլավոնական)» համալսարանի կողմից իրականացվող «Լաբորա-տորիաների վերազինման և զարգացման» ծրագրի մասին» N Մ-575-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Իմմունոֆարմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00650292) 2016 թվականի հուլիսի 8-ին կնքված N «2016-08» պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լաբորատոր սարքավորումների ձեռքբերման, մատակարարման, տեղադրման, կարգաբերման, թողարկման և ուսուցման ծառայությունների մատուցում՝ 43,247,400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ- 694 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳԱՐԵԳԻՆ Ա ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ » ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 20-ի N 07/80-2/18764-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հուլիսի 19-ի N 02/14/9063-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 19-ի N 06/3-8/21498-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 2,547,710 դրամ արժողությամբ «Գարեգին Ա կրթահամալիրին հարող տարածքի արտաքին լուսավորության մոնտաժային աշխատանքներ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԱՊՌ-ԻՔՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06107403) 2016 թվականի հունիսի 20-ին կնքված՝ N 03Շ/016 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լուսավորության աշխատանքների իրականացում՝ 2,547,710 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի [illegible]ման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատա[illegible]:

4. [illegible]ել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-[illegible] [illegible] Հանրապետության արդարադատության նախարարություն և [illegible] կառավարությանն առընթեր պետական եկամուտների [illegible]:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մուշեղ եպիսկոպոս Բաբայան
«14» հուլիսի 2016 թ.

## Գարեգին Ա կրթահամալիրին հարող տարածքի արտաքին լուսավորության մոնտաժային աշխատանքներ

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է կատարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գարեգին Ա կրթահամալիրին հարող տարածքի արտաքին լուսավորության մոնտաժային աշխատանքները: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ եկեղեցաշինություն: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 2,547,710 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, հոգևորականները և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 20 հուլիսի 2016թ. – 10 սեպտեմբերի 2016թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կատարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գարեգին Ա կրթահամալիրին հարող տարածքի արտաքին լուսավորության մոնտաժային աշխատանքները 2,547,710 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:<br>Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 20 հուլիսի 2016թ. – 1[illegible] սեպտեմբերի 2016թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գարեգին [illegible] կրթահամալիրին հարող տարածքի արտաքին լուսավորության մոնտաժայի[illegible] աշխատանքները 2,547,710 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համա[illegible]Էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է [illegible] Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետա[illegible] ֆինանսական բաժ[illegible]ների և ՀՀ կառավարության [illegible] համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի [illegible]ց [illegible] ամփոփ [illegible]կություն: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ- 695 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳԱՐԵԳԻՆ Ա ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 20-ի N 07/80-2/18739-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հուլիսի 19-ի N 02/14/9062-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 19-ի N 06/3-8/21499-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 7,097,683 դրամ արժողությամբ «Գարեգին Ա կրթահամալիրին հարող տարածքի բարեկարգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01831375) 2016 թվականի հունիսի 20-ին կնքված՝ N 15Ա/016 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տարածքի բարեկարգում՝ 7,097,683 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն ո[illegible] Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հա[illegible] արդարադատության նախարարություն և Հանրապե[illegible] առընթեր պետական եկամուտների կոմիտե:

[illegible]  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մուշեղ եպիսկոպոս Բաբայան
«14» հուլիսի 2016 թ.

Կ. Ձ/2

## Գարեգին Ա կրթահամալիրին հարող տարածքի բարեկարգում

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գարեգին Ա կրթահամալիրին հարող տարածքի բարեկարգումը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ կրթական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 7,097,683 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 20 հունիսի 2016թ. – 10 օգոստոսի 2016թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կատարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գարեգին Ա կրթահամալիրին հարող տարածքի բարեկարգումը՝ 7,097,683 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 20 հունիսի 2016թ. – 10 օգոստոս 2016թ..: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գարեգին Ա կրթահամալիրին հարող տարածքի բարեկարգումը՝ 7,097,683 ՀՀ դրամով առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկ[illegible] Մայր [illegible] Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինար[illegible] բաժնի և ՀՀ կառավարության բար[illegible] ծրագրերի հա[illegible] հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավ[illegible]ություն: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ- 696 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳԱՐԵԳԻՆ Ա ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 20-ի N 07/80-2/18741-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հուլիսի 19-ի N 02/14/9061-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 19-ի N 06/3-8/21502-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 32,837,598 դրամ արժողությամբ «Գարեգին Ա կրթահամալիրի տարածքի բարեկարգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01831375) 2016 թվականի հունիսի 20-ին կնքված՝ N 16Ա/016 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տարածքների ոռոգման համակարգի կառուցման, կանաչապատման և խոտածածկի աշխատանքների իրականացում՝ 32,837,598 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մուշեղ եպիսկոպոս Բաբայան
«14» հուլիսի 2016 թ.

Ա-9/3

## Գարեգին Ա կրթահամալիրի տարածքի բարեկարգում

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գարեգին Ա կրթահամալիրի տարածքի բարեկարգումը: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 06800406: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, բնագավառը՝ կրթական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 32,837,598 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 20 հունիսի 2016թ. – 10 օգոստոսի 2016թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կատարել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գարեգին Ա կրթահամալիրի տարածքի բարեկարգումը՝ 32,837,598 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 20 հունիսի 2016թ. – 10 օգոստոս 2016թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է իրականացնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գարեգին Ա կրթահամալիրի տարածքի բարեկարգումը՝ 32,837,598 ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Էջմիածնի քաղաքապետարանի հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**22 հուլիսի 2016 թվականի N Մ- 697 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 20-ի N 07/80-2/18816-16 և Հայաստանի Հանրապետության կառավարու-թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 20-ի N 06/3-8/21664-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված ապակիները (22 տեղ, 43,485 կգ ընդհանուր քաշով, 15,383.25 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, ԵՏՄ բեռ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1237-Ա և դեկտեմբերի 28-ի N Մ-1459-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**22 հուլիսի 2016 թվականի N Մ- 698 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-528-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 20-ի N 07/80-2/18751-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 18-ի N 06/3-4/21371-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի մասին» N Մ-528-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2016 թվականի հուլիսի 8-ին կնքված՝ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Ռեգուլյար» տեսակի բենզինի ձեռքբերում՝ 355,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**22 հուլիսի 2016 թվականի N Մ - 699 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 21-ի N 07/80-2/18891-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հուլիսի 21-ի N 06/3-8/21881-16 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 13-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից 2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ալգարե» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05521865) 2016 թվականի հունիսի 28-ին կնքված՝ N 037/16 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեսահսկման և պահպանման համակարգերի տեղադրման աշխատանքների կատարում՝ 3,959,544.60 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**27 հուլիսի 2016 թվականի N Մ - 700 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-1173-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2016 թվականի հուլիսի 22-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից ձեռքբերված լեղ լուսատուները (460 տեղ, 2,492 կգ քաշով, 48,530 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 631,000 դրամ, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից «Կովկասյան կենսաբազմազանության ապաստարան» ծրագրի մասին» N Մ-1173-Ա որոշմամբ (2014 թվականի օգոստոսի 1-ի N Մ-768-Ա, 2015 թվականի հուլիսի 24-ի N Մ-827-Ա և 2016 թվականի մայիսի 20-ի N Մ-392-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամին՝ նշված բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հուլիսի 2016 թվականի N Մ- 701 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի հուլիսի 26-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված դռան պլաստմասե չգրանցված քարտերը (4000 հատ, 12.62 կգ ընդհանուր քաշով, 720 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 114.55 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1444-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**27 հուլիսի 2016 թվականի N Մ- 702 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի հուլիսի 26-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1444-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Malikian S. L.» կազմակերպության հետ (Calle La Palma №7-Madrid-28004) 2016 թվականի հուլիսի 18-ին կնքված N B83958934 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արտիստական ծառայությունների մատուցում՝ 2,875 եվրոյին համարժեք դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 հուլիսի 2016 թվականի N Մ- 703 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-1222-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N1

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2016 թվականի հուլիսի 26-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրի մասին» N Մ-1222-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի դեկտեմբերի 25-ի N Մ-1444-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԲԱՍՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00005537) 2016 թվականի հուլիսի 27-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 425,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**27 հուլիսի 2016 թվականի N Մ - 704 - Ա**
**(Որոշումն ընդունվել է 2016 թվականի հուլիսի 22-ի նիստին)**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ N 2**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 26-ի N 07/80-2/19064-16 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 25-ի N 06/3-8/22227-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից անհատ բարերար Տիգրան Սաֆարյանի կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված երկու ավտոմեքենաների ներմուծման ծրագիրը՝

1) 2015 թվականի արտադրության Nissan Frontier մակնիշի ավտոմեքենա, նույնականացման համարները՝ 1N6AD07W45C440390, 2,100 կգ ընդհանուր քաշով, 6,995 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 950 ԱՄՆ-ի դոլար.

2) 2011 թվականի արտադրության Mercedes-Benc Sprinter մակնիշի ավտոմեքենա, նույնականացման համարները՝ WD3PE7CC3B5598101, 2,100 կգ ընդհանուր քաշով, 5,015 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 1,400 ԱՄՆ-ի դոլար;

Մաքսային ձևակերպումները կատարվելու են ԱՄՄՁՄ մաքսատանը:

Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 հուլիսի 2016 թվականի N Մ - 705 - Ա**
(Որոշումն ընդունվել է 2016 թվականի հուլիսի 22-ին)
**քաղ. Երևան**

## ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍԵԼԱՎ ՀԱՅԱՍՏԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2016 թվականի հուլիսի 26-ի N 07/80-2/19106-16, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2016 թվականի հուլիսի 26-ի N 02/14/-942416, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2016 թվականի հուլիսի 29-ի N 01/15.2/2951-16, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 2016 թվականի հուլիսի 26-ի N 1/02.2/8797-16, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2016 թվականի հուլիսի 25-ի N 06/3-8/22218-16, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի 2016 թվականի հուլիսի 27-ի N 01/15/2948-16 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի 2016 թվականի հուլիսի 25-ի N 014507/-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող՝ 43,686 շվեյցարական ֆրանկին համարժեք դրամ արժողությամբ «Սելավ Հայաստան» ծրագիրը (կցվում է):

2. Հայկական կարմիր խաչի ընկերությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
Հայկական Կարմիր խաչի ընկերության
Գլխավոր քարտուղարի՝ Աննա Եղիազարյանի կողմից
**21.07. 2016թ.**

Ս ե լ ա վ, Հ ա յ ա ս տ ա ն
Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Տրամադրել օգնություն սննդի և հիգիենիկ փաթեթների և կանխիկ գումարի տեսքով ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր համայնքի և Շիրակի մարզի Արթիկ քաղաքի սելավից տուժած 132 խոցելի ընտանիքներին: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով: |
| 3. | Բարեգործը | Կարմիր խաչի և Կարմիր Մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի (ԿԽԿՄՖ) Արտակարգ իրավիճակներին արձագանքման հիմնադրամ: |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր համայնք և ՀՀ Շիրակի մարզի Արթիկ քաղաք: Արտակարգ իրավիճակներին արձագանքման բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | **43.686 Շվեյցարական ֆրանկին համարժեք ՀՀ դրամ:** |
| 7. | Բարեգործություն ստացողը | Սելավից տուժած ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր համայնքի և ՀՀ Շիրակի մարզի Արթիկ քաղաքի 132 ընտանիք: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Հուլիս 2016 – Սեպտեմբեր 2016 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի հիմնական ակնկալվող արդյունքն է՝ տրամադրել օգնություն սելավից տուժած Կարճաղբյուրի 120 և Արթիկի 12 ընտանիքներ:<br><br>**Հիմնական գործողությունները**<br>1.1 Ձեռք բերել 132 ընտանիքների համար նախատեսված սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթներ, որի բյուջեն կազմում է **30.966** շվեյցարական ֆրանկ, ժամանակահատված՝ հուլիս – օգոստոս, 2016թ.:<br>1.2 Իրականացնել ձեռք բերված օգնության բաշխումը, որի բյուջեն կազմում է **1.300** շվեյցարական ֆրանկ, ժամանակահատված՝ հուլիս – օգոստոս, 2016թ.:<br>1.3 Իրականացնել «Կանխիկ գումարի» տեսքով օգնության տրամադրում շահառու 132 ընտանիքներին, որի բյուջեն կազմում է **10.560** շվեյցարական ֆրանկ, ժամանակահատված՝ հուլիս – օգոստոս, 2016 թ.:<br>1.4 Կազմակերպել աշխատանքային հանդիպում ծրագրի իրականացումը և արդյունքները ներկայացնելու, ինչպես նաև փորձի փոխանակման նպատակով, որի բյուջեն կազմում է **600** շվեյցարական ֆրանկ, ժամանակահատված՝ սեպտեմբեր, 2016 թ.: |

| | | |
|---|---|---|
| | | Ծրագրի կազմակերպչական և պահպանման ծախսերը կազմում են **260** շվեյցարական ֆրանկ, որը ներառում է ֆինանսական ծառայությունների (բանկային ծախսեր), ադմինիստրատիվ ծախսեր, կամավորների ապահովագրություն: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիր՝<br>1. Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել հիգիենիկ պարագաների և սննդի փաթեթներ շահառու 132 ընտանիքներին բաշխելու նպատակով, որի գումարը կազմում է **30.966** շվեյցարական ֆրանկ: Ինչպես նաև տուժած ընտանիքներին կտրամադրվի «Կանխիկ գումարի» տեսքով օգնություն, որի գումարը կազմում է **10.560** շվեյցարական ֆրանկ: Տրամադրված օգնությունը կաջակցի տուժած բնակչությանը՝ սելավից հասված վնասները վերականգնելու հարցում:<br>2. Ծրագրի շրջանակներում նախատեսված աշխատանքային հանդիպումը կազմակերպելու համար ձեռք են բերվելու գրենական պիտույքներ և հյուրանոցային ծառայություն՝ դահլիճի տրամադրում, սուրճի ընդմիջում և ճաշ, որի գումարը կազմում է **600** շվեյցարական ֆրանկ:<br>3. Ձեռք բերված մարդասիրական օգնությունը համայնքներում բաշխելու նպատակով կվարձակալվեն անհրաժեշտ բեռնատար տրանսպորտային միջոցներ, ինչպես նաև ձեռք կբերվի վառելիք, որի գումարը կազմում է **1.300** շվեյցարական ֆրանկ:<br>4. Ծրագրի կազմակերպչական և պահպանման ծախսերը կազմում են **260** շվեյցարական ֆրանկ, որը ներառում է ֆինանսական ծառայությունների (բանկային ծախսեր), ադմինիստրատիվ ծախսեր, կամավորների ապահովագրություն: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական և պահպանման ծախսեր՝ **260** շվեյցարական ֆրանկ, որը ներառում է ֆինանսական ծառայություններ (բանկային ծախսեր), ադմինիստրատիվ ծախսեր, կամավորների ապահովագրություն:: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի շրջանակներում ՀԿԽԸ սերտորեն համագործակցելու է ՀՀ Գեղարքունիքի և Շիրակի մարզպետարանների, Արթիկի քաղաքապետարանի և Կարճաղբյուրի համանքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է յուրաքանչյուր շաբաթ տրամադրել օպերատիվ հաշվետվություն ինչպես նաև վերջնական պատմողական և ֆինանսական հաշվետվություններ Կարմիր խաչի և Կարմիր Մահիկի ընկերությունների միջազգային Ֆեդերացիային: Հայկական Կարմիր խաչի ընկերության գործադիր կոմիտեի կողմից իրականացվելու է գործողությունների անմիջական վերահսկում: Ավելին, ԿԽ/ԿՄ ՄՖ կողմից ժամանելու է նաև ներկայացուցիչ՝ մշտադիտարկման և գործողությանը աջակցելու նպատակով: Նախատեսվում է ներկայացնել հաշվետվություններ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին, ըստ սահմանված կարգի: |